



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԹԱԿԱՆ. Կրթարանի թէ՛ վարժարան..... Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ
 ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ. Գրաբանութիւն եւ ձեռագիրք..... ՀԱՍԿԱՔԱՂ
 ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ. Երեկոյեան դպրոցք ի նիւ-Երբ..... ԵԱՆՔԻՆ
 ՆՈՐԱՎԷՊ. Ի Գարնան (ԿԻՅ ՏԸ ՄՈՔԱՅԱՆ) Թարգմ.....
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Քերդուածք Ղուկկիանոս Երզնի Կարնեցւոյ. Թիւրք-
 մանիք (ԲԱԶՄԱՎԷՊ)
 ԱՌՂՋԱԲԱՆԱԿԱՆ. Թուղն
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ..... Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ : — տարեկան Կէս ոսկի Օսման .
 » » վեցամսեայ Բառ » »
 Դաւառներ տարեկան Կէս » »
 Օտար քաղաքներ » 12 Ֆրանք
 Թղթատարութեան ծախք » 15 դահ. արծաթ
 Մէկ Թերթին Գինն է 60 փարայ

Մասիսի Խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գրութիւն կամ Խմբագրական պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիկ և Մասիս Լրագրաց
 Ղալաթիա, Նորաստեղծեան Խան

Կ. ՊՈԼԻՍ .

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

ՊԱՐԱՐԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 8 մարտ.

ԸՆԹԱՅՔ ՓՈՍՈՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	140
3 » » » (վճակնին)	109 5/8
3 » Բարիսի » (պանքայի)	23
» » » (վճակնին)	23 7 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Բոնսոյիտե

Երեկ Երեկոյ Գոց. (Միաց. D. Սերի) 49 38	Ղաչեկան
Պորային գոցուելէն վերջը » 49 39	
Բերայի մէջ » — —	
Առաւօտուն բացուեցաւ » 49 38	
Բարձրագոյն գին » 49 38	
Նուազագոյն » 49 38	
Կէս օրին » 49 38	

Փոխառութիւն 1858) A. Սերի ա. գլ. ոսկի 36 30	
» 1862) B. » » 24 5	
» 1860) » » » 24 5	
» 1863) » » » 24 5	
» 1872) » » » 24 5	
» 1865) C. » օսմ. » 49 35	
» 1869) » » » 49 35	
» 1873) » » » 49 35	

Իւնիֆիւ Եգիպտական

Երեկ Երեկուն գոցուեցաւ	75 20
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	75 20
Կէս օրին	75 20

ԲԱՃՆԵՏՈՄՍԻ

Սօսիթէ Երեկուն Գ. Կ. Անգլ. Լ. Բ. 3 46	
Բրէտի Երեկուն » » Օսմ. » 7 7	
Պանք առ Գ. սն. » » » 5 25	
Սոս. Շանթ է վալէօր... » » » 3 30	
Թրամուէյ... » » » 277 1/2	
Բոււնէլի Երկաթուղի	Ֆր. 47 75
Օպլիկտսիոն առ Բրիթիթէ	» 409
Բաժնեթուղթ Լաւրիօմի	» 66

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	դր. ... 400
20 Ֆրանքնոց	» ... 87 20
Անգլիական ոսկի	» ... 140 7
Բօլ Իմբերիալ	» ... 90 6
Բրիմից	» ... 54 45
Ռուսկի թղթագրամ	» ... 89 40
» արծաթ	» ... 89 20
Յիօրին	» ... 9 3
Մէճ. արծ. (տարբ.)	» ... 107 —
Վեցնոց	» ... 402 25
Հինգնոց	» ... 402 35

Մէթալիք	» ... 99
Պղինձ	» ... —
Թղթագրամ	» ... —

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 19 Մարտ, ժամ 5 վայր. 15 Երեկոյ

Անգլ. քօնսոյիւէ գոցուեցաւ	98 1/8
Օսմ. » Սերի S. բացուեցաւ	17 5/8
» » » գոցուեցաւ	17 5/8
» » » Ա.	36
» » » Բ.	20 1/2
» » » Գ.	17 5/8
Փոխառութիւն 1877	84 5/4
Պանք Օթօման	13 7/8
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	94
Եգիպտական միացեալ (Իւնիֆիւ)	68 1/8
» առանձն. (Բրիվիլէթիէ)	90 5/4
Տայրա Սանիէ	66
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա)	87
Հունգարական պարտաթուղթ 1877	—
Փոխանակութիւն Բարիդի վրայ	—

Վիէննա, 19 Մարտ, ժամ 4 Երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	124 70
Օսմանեան Երկաթուղի	23 50

Բարիզ, 19 Մարտ, ժամ 45 վայր. Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց	140 20
» » 3 0/0.....բաց	81 60
Օսմանեան քօնսոյիտե բացուեցաւ	18 05
» » գոցու. գ. Կ.	48
Միացեալ պարտք Սերի Բ.	20 80
» » Գ.	47
» » Գ.	— —
Օսմանեան Երկաթուղի	48 75
» Բէժիլ բաժնեթուղթ.....	—

Պանք Օթօման	603 75
Գրէտի Լիօնէ	557 50
» Ֆոնսիէ գ. Կ. Բարձրացում 1372	
Բաժնետոմս Լիօնի (գուր. կտր.)	1285
Սուէզի ջրանցք	2157 50
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.)	99 1/4
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97 75
Եգիպտական միացեալ գոց	346 25
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	61 5/2
Բրիթիթէ Թիւրք	403 75
5 0/0 Հելլենական (գ. Կ.)	352 50
Չէք Լոնտրայի վրայ	25 37

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Մարտ 19, ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	140 28 5/4
Օսմանեան »	18 10
Եգիպտական միացեալ	348 75

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ա.ԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ՄԱՐՏ 9

ԹԻԻ 3760

ԿՐԹ Ա. Կ Ա. Ն

ԿՐԹԱՐԱՆ ԹԻ՛՛՛ ՎԱՐԺԱՐԱՆ

Ա.

Մեր ո՛չ միայն ժողովրդական այլ եւ գըրական լեզուի մէջ կան բազմաթիւ բառեր, որ չեն համապատասխանում իրենց բուն նշանակութեան: Բառերի այդ սխալ գործածութիւնը նկատելի է մանաւանդ այն դարձուածների մէջ, որոնց համապատասխան գիտութիւնները դեռ քիչ են մշակուած մեր երկրում: Այդպէս են, օրինակի համար, փիլիսոփայութեան, մեքենականութեան, բնալուծութեան ու մանկավարժութեան գործողութիւններին, դադարներին ու առարկաներին վերաբերեալ բազմաքանակ անունները: Բայց մեր լեզուն յոյժ աղքատ է միւս կողմից այն բառերով, որոնց բովանդակով վարժութիւններն ու սովորութիւնները չկան, կամ վաղուց ի վեր վերացած են մեզանից: Այդ կարգին են վերաբերում զինուորական, սիրահարական ու քաղաքավարական նրբութիւններ արտայայտող մտքերն ու զգացմունքները:

Անշուշտ մեր նոր սերնդի մէջ օրէ ցօր ծաւալուող եւրոպական գիտութիւններն ու քաղաքակրթութիւնը պիտի բարձրացնեն ո՛չ շատ հեռու ապագայում մեր լեզուի զարգացման արդի մակերեւոյթը, սակայն մեզ յոյժ սիրելի էր այժմէն իսկ տեսնել մեր մասնագէտների ջանքերը այդ մասին: Այդ բառաշնորհութիւնը անհրաժեշտ է մանաւանդ ճիշդ որոշման համար այն երե-

ւոյթների ու հիմնարկութիւնների, որոնց սխալ ըմբռնումը իւր մեծութեամբ ու հարկութեամբ միշտ ցաւ է պատճառում մեր աչքերին ու ականջներին: Այս միտք ունիմ պարագել յաճախ բացատրութեամբ սխալ բառերի այն խմբի, որ գլխաւորապէս մանկավարժութեանն է պատկանում:

Այս անգամ ես վերցնում եմ կրթան, վարժարան, ուսումնարան, ճեմարան, դպրոց, դպրանոց եւ նրանց համապատասխան կրթիչ, ուսուցիչ, դաստիարակ, կառավարիչ եւ վերահսկող բառերը: Այս ես անում եմ ո՛չ միայն լեզուական, այլ աւելի ծանկալարժան նպատակով, որի վրայ եւ հրաւիրում եմ իմ պաշտօնակից կրթիչների մասնաւոր ուշադրութիւնը:

Ի՞նչ է կրթութիւնը:

Ըստ որոշման նորադոյն մանկավարժ-փիլիսոփայների, կրթութիւնն է չափահաս մարդու մը հոգեբանական ներգործութիւնը աւելի տհաս ու նուաղ զարգացած էակի վրայ: Հոգեբանական, զի կրթիչը պարտք ունի մշակել ու կերպարանաւորել իւր ենթակայ տղայի կամ պատանեկի միտքը, կամքը եւ սիրտը, որ նրա ներքին աշխարհն, աֆեկտ հոգին են կազմում: Արթել կաւելի է պատահաբար այդպէս է անում իւրաքանչիւր հայր, ազգական եւ առհասարակ բարի ու մարդասէր մարդ, որ երբեմնակի տղաներին հանդիպելիս՝ աշխատում է թողնել նրանց մէջ որ եւ է բարոյական հետք իւր տուած խրատներով ու հաղորդած տեղեկութիւններով: Արթել կարելի է նաեւ սուանց որոշ ծրագրի այդ ընթացքն ունին իմականարկած բարի մարդիկ, զի նրանք նիւթ են ընտրում միշտ «սարէն ու ձորէն»,

յարմարեցնելով իրենց գործողութիւնը տը-
ղաների ըստէական հանգամանքներին :

Այդպէս չէ սակայն զուտ մանկավար-
ժական արժէք ունեցող կրթական գործո-
ղութիւնը : Այստեղ կրթիչը պարտաւոր է
ունենալ իւր տրամադրութեան տակ ո՛չ
միայն հանապազօրեայ որոշ ժամեր, այլ եւ
ընթանալ իւր ձեռքում եղած հաստատուն,
մշակուած եւ լաւ հասկացուած ծրագրով :

Հոգեւոր փրայ անվտանգ ներգործելու
համար պէտք է խմանալ մարդկային հոգու
կանոնաւոր դարգացման օրէնքները : Ուստի
ամեն մի բարեխիղճ կրթիչ պարտաւոր է
նախ ծանօթ լինել այն գիտութեան հետ,
որ այդ օրէնքների փրայ է վարդապետում,
այսինքն՝ հոգեբանութեան : Ի բացակայու-
թեան այդ պատրաստականութեան, նա
պէտք է ընդունակ լինի խրատուել գէթ
այն առաջին զոհերից, զորս իւր անձեռնհա-
սութեամբ էր հնձած : Այլապէս ի զուր է
նրա գործունէութիւնը, թմրեցուցիչ, ա-
պականիչ ու սպանիչ նրա կրթութիւնը,
զի անբնական ու աչակերտի թարմ հոգին
գայթակղեցնող է նրա ընթացքը :

Ապացուցանեմ ասածներս, թէ եւ շատ
համառօտ :

Հոգեբանութեան մէջ յայտնի է մի օ-
րէնք հոգեկան իւրացման եւ վերացման մասին :
Իւրացուցում է կոչուում մեր հոգու այն
ընդունակութիւնը, որով մենք արտաքին
աշխարհի բոլոր տպաւորութիւնները տե-
ղաւորում ենք հետզհետէ մեր գլխում :
Այդպէս է անում տղան, երբ լսում է այս
ինչ կամ այն ինչ պատմութիւն՝ ազգերի
ու անհատների մասին . այդպէս է անում
նա, երբ ստանում է իւր կրթիչից տեղե-
կութիւններ՝ լայնածաւալ տիեզերքի երե-
րեւոյթների ու առարկայների մասին . այդ
ամբարումն է կատարում նա, երբ մասնա-
կից կամ հանդիսատես է լինում մաթեմա-
թիքական պէսպիսաց ոյն խնդիրների լուծ-
ման . վերջապէս նա լեցնում է իւր գլուխը
— եւ յաճախ բոլորովին ակամայ — այն ա-
մենով, ինչ որ նրա աչքը, տկանջը, քիթը,
բերանն ու շրջափակիքը՝ Աստուծոյ դեղնեղիկ
աշխարհից նրան տեսնել, լսել, հոտոտել,
ճաչակել ու շօշափել կը տան : Ուրեմն իւ-
րացման գործողութիւնը, ինչպէս տեսնում
էք, ոչ այլ ինչ է, բայց եթէ արտաքին աշ-

խարհի հում, կամ հոգեբանական լեզուով
նախընթացաւ նիւթի կուտակում մեր հոգու
մէջ :

Սակայն մարդս ստեղծուած չէ միայն
սպառելու, այլ եւ արտադրելու համար :
Ուստի մենք աշխարհի տպաւորութիւնները
իւրացնելուց յետոյ քարոզում ենք անկեղծ
համոզումով թէ՛ պէտք է լինել ծնողասէր, ըն-
կերասէր, հայրենասէր, մարդասէր, աղա-
տասէր, յայտնում ենք միթխարի ճշմար-
տութիւններ թէ՛ տիեզերքի ապշեցուցիչներ-
դաշնակութեան դաղտնիքը նրա գնդաձեւ
մարմինների ձգողականութեան մէջն է,
այդ մարմինները փառաւորապէս պտոյտ են
տալիս՝ հակառակ մեր բարի պապերի պար-
զամտութեան, երկրագնդի մարդ կոչուած
մթեղ բնակիչը նրա կատարեալ տէրն ու
կառավարին է եւ . ձեռք ենք բերում կա-
նոններ՝ բոլոր թուաբանական, արձեպրա-
կան, երկրաչափական ու եռանկիւնաչա-
փական մարդու գլուխը պայթեցնող խառ-
նիճաղանձ խնդիրների ահարկու բանալի-
ներ : Սակայն ո՞վ կը տար մեզ մեր այդ բո-
լոր համադրանքը, ո՞վ էրեւանները, օրէնքներն ու
կանոնները եթէ չը կատարէինք վաղօրօք,
բայց մի բարեխիղճ, տոկուն ու կանոնաւոր
աշխատանքով, մեր հոգու անհրաժեշտ անանք
իւրացումը : Այդպիսով ուրեմն մարդկու-
թիւնը հանած է ընդհանուր յարկ-թիւնը,
վերացական այն թանձրացեալ նիւթի, որ
վաղօրօք արդէն նա իւրացուցած էր : Եւ
այդ է ահա մեր հոգու վերացացման գոր-
ծողութիւնը : Ապա ուրեմն՝ նախ իւրացում
եւ ապա վերացում :

Այդ կանոնաւոր իւրացումն ու վերաց-
ման օրէնքով են ընթացել մինչեւ այսօր հա-
մայն մարդկութեան միտքն ու սիրտը եւ
նրանով պէտք է կառավարուին, հետեւա-
բար, անձնաւոր մարդու հոգեկան զօրու-
թիւնները : Նա պէտք է լինի մէն մի կըր-
թիչի անհրաժեշտ ուղեցոյցներից մէկը, զի
նա է մեր հոգու ղեկավարութեան տարրա-
կան հիմունքներից մէկը : Իբրեւ համա-
մարդկային բնական օրէնք, նա է կրթութեան
ֆակտորը իւրական ճանապարհը : Եւ ապար-
դիւն, միասակար ու վտանգաւոր է այն
ամեն կրթութիւն, որ դուրս է այդ ճա-
նապարհից, զի նա անբնական է :

Այդ այդպէս լինելուց յետոյ մտնենք

այժմ մեր կրթարանները հանդիսատես լինելու այն հայ կրթիչների գործունեությունն է, որոնց անյայտ է այդ տարրական սկզբունքը հոգեբանությունը:

Ի՞նչ կը տեսնենք այդտեղ: Կը տեսնենք կրթիչներ որոնք ամեն քայլափոխի կրկնում ու երեքնում են աշակերտներին թէ պէտք է լինել աշխատել, ընկերին դէշ չանել, ուսուցչին յարգել և՛ և՛: Կը տեսնենք կրթիչներ, որոնք ծայրէ ի ծայր դոց են անել տալիս քերականական հասանել: Կը տեսնենք կրթիչներ, որոնք իրենց թուաբանությունն իւրաքանչիւր դասը սկսում են Պ. Տ. Պողաճեանի գրքի օրէնքները բառ առ բառ եւ տառ առ տառ կրկնել տալուց յետոյ: Կը տեսնենք կրթիչներ, որոնք ամենայն անխնայութեամբ լեցնում են մատաղ տղայների ուղեղները կրօնի ամենավերացական դաւանանքներով: Ի՞նչ խօսքով կրթիչներ, որոնք նախ վերացում եւ ապա իւրացում են սկսում: Նայելով գործի միւս կողմը՝ կը տեսնենք աշակերտներ, որոնց համար ճիշտ եւ թուժակային ազդասիրութիւնը, ընկերասիրութիւնը, բարձր բարոյականութիւնը ամենամեծ առաքելութիւնն է համարուում: աշակերտներ, որ ապրիլ առանց խմտտակութեան՝ անհասկանալի են համարում: աշակերտներ, որ չգիտեն խօսել, կարգապահ մանաւանդ գրել՝ երկու խօսք քերականապէս: աշակերտներ, որ արիւն քրտինք են թափում մի թեթեւ թուաբանական խնդրի լուծելու համար: աշակերտներ, որ կրօնի պատուէրները չկատարելուց զատ՝ իրենց կրօնական ճշմարտութիւնն էլ անաստուածութեան են փոխում: Ի՞նչ խօսքով աշակերտներ, որ անբնական կրթութեան անհրաժեշտ զոհերն են դարձած:

Այս երեւոյթը ընդհանուր է գրեթէ մեր բոլոր կրթարաններին եւ թէեւ նա կարծած է եւ ուրիշ ոչ նուազ հզօր պատճառներից, բայց կանոնաւոր իւրացման եւ վերացման օրէնքի անտես առնելը միշտ անբաժան է նրանցից:

Թող առայժմ այս մէկ օրինակը բաւական համարուի բացատրելու թէ ի՞նչ անքակտելի կապ կայ կրթական գործի ու հոգեկան օրէնքների, Մանկավարժութեան ու Հոգեբանութեան մէջ: Բայց դեռ սա միայն մէկն է հոգեբանութեան հազարաւոր օրէնքներից, որ իմ յօդուածներին նիւթ պիտի դառնան ապագայում:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ԳՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՁԵՌԱԳԻՐՔ

« Ոճը մարդն է » գրած է Պիւֆոն այն հոգաւոր ճառին մէջ զոր կ'ուղղէր իւր Ծրանսական Ակադեմիոյ պաշտօնակցաց: Անկէ ի վեր փորձած են ճշդել այդ բանաձեւն եւ շատ անգամ թերի գտած են զայն: Բայց Պիւֆոն ա՛յնքան բարձր հեղինակութիւն մ'էր, մարդկան եւ անասնոց վրայ խօսած ատեն ա՛յնքան յաճախ իրաւունք ունէր, որ բնաւ չընդունուեցաւ թէ կրնար անիրաւ լինիլ: Եւ առածը նուիրական մընաց՝ ի մեծ ուրախութիւն հետորութեան ուսուցչաց:

Չարիքը մեծ չափով լինէր առանց կարգ մը մարդոց զորս ոչինչ կը վճատեցնէ երբ պէտք է կէս-ճշմարտութենէ մը մեկնիլ՝ սըխալի մը յանգելու համար: Փոխանակ առածները սեղմելու, սահմանափակելու, կը տարածեն զայնա, կ'ընդարձակեն, կը խեղաթիւրեն, եւ կամ՝ նախնական բնագիրն ընդօրինակելով՝ առաւել կամ նուազ պատասխանատու հրատարակիչները կը լինին անձա՛հ եւ նորանչան մտածումներու: Մի՛ խնդրէք անոնցմէ հարթել ձեր պարտիզին ծառուղին. իրենց ուղածն է պրպտել ածունեքուն մէջ: Գաղափարներ փնտռող մարդիկ չեն, այլ խուզարկուներ՝ ակներեւ իրողութեանց քով:

Այս կերպով կարելի է ահա մեկնել թէ ինչո՞ւ համար ուղած են մարդու մը նկարագիրն եւ բնաւորութիւնը դատել իւր գրուածքէն:

Գիտութիւն մը ծնած է աստի, գիտութիւն որ քրաթանութիւն (կաթոլիկ) անուաններեւ կը ներկայանայ մեզ:

Վերջին ժամանակներս եռանդ մը տարածուած է, այն է նշանաւոր մարդոց ձեռագիրներու հաւաքածոյն ընել: Արաւ է թէ բոլորովին նոր չէ այս, որովհետեւ նախնիք, իրենց աստուածոց եւ դիւցազանց քով, ունէին անձեր որք մոլեգին խանդիւ կը ջանային սոյն օրինակ հաւաքածոյներ կազմել:

Ալեքսանդրացի Ս. Կղէմէս կը պատմէ մեզ

արդարեւ թէ Աստուս թագուհին, Քսէր-
քսէսի ժամանակները, ձեռագիրներու հա-
ւաքածոյ մ'ունէր: Կը տարակուսինք սա-
կայն թէ Աստուսայի պալատին մէջ խնամով
պահուած մոմեղէն տախտակներուն մէջ
գտնուէր հնչեակ մը Թէմիստոկլէսի ստորա-
գրութեամբ: Յետոյ կը յիշուի Թէոսացի Ա-
պելլիքոն անուն անձ մը, որ մինչեւ իսկ կ'եր-
թար Աթէնքի պաշտպան զից տաճարին մէջ
պաշտօնական յայտարարութիւնները պատ-
ուել անուել անոնց ստորագրութիւններն
հաւաքելու համար: — Մեզ աւելի մօտ ժա-
մանակաց մէջ, կը ըսուի թէ Քալիսթոս ու-
նէր, ի մէջ այլ հրաշալեաց, ձեռագիր նա-
մակաց հետաքրքրական եւ սքանչելի հա-
ւաքածոյ մը: Թերեւս օր մը բարեբաստ
արուեստագէտ մ'երեւան հանէ այդ թան-
կազին տետրակն եւ հրատարակէ: Ուրիշ անձ
մ'եւս նոյնպէս նշանաւոր հանգիստացաւ
Ֆրանսական Յեղափոխութեան նախնիաց
քանի մը տարիներուն մէջ: Կը կոչուէր Պար-
հանայի Սեպուհն եւ 1766ին մեռաւ ի վի-
էննա: Ունէր երեք հաշար հինգ հաշար երեսուն
երկու ձեռագիրներ որք կը վերաբերէին ար-
քունի պալատականաց եւ « Փրանսացի թէ
օտարագրի գեղանի ու պարկեշտ տիկնանց »:

Յեղափոխութիւնը ծագեցաւ եւ Եւրո-
պա ուրիշ հոգեր ունեցաւ քան ձեռագիր-
ներ հաւաքելու ճաշակն: Աւելին կայ. 1795
յուշուար 5 թուականաւ հրամանագիր մը
կը պատուիրէր թագապետութեանց՝ գրա-
ւել իրենց ձեռաց տակ գտնուած բոլոր ձե-
ռագիրներն ու մտադրութիւններն եւ անոնց-
մով թնթանօքի յիմարուշտ շինել:

Երկրորդ կայսրութեան միջոցին ձեռա-
գիրներու ճաշակն վերստին երեւան ելաւ:
Հասարակութիւնն երեսի վրայ թողուց ձե-
նապակեայ անօթներն ու նամակադրոշմ-
ներն, եւ ետեւէ եղաւ ձեռք ձգելու թղթի
կտոր մը որ հանրածանօթ անուն մը կը-
րէր: Ձեռագիրներու համբաւն բարձր ըն-
կերութեանց սրահներուն մէջ մոցուց վե-
րըստին «լլօֆֆ», այդ պատուհասն այն ամեն
մարդու որ ի Փարիզ անուն մ'ունէր գրա-
կանութեան մէջ, որովհետեւ իւր ձեռա-
գիրը կը խնդրէին «լլօֆֆ» մէջ գրուելու
համար: Այս առթիւ կը պատմեն թէ Մե-
թերնիք իշխանն օր մը Ֆրանսացի նշանա-
ւոր քննադատ Ժիւլ Ժանէնի գիմեց՝ որպէս

զի քանի մը տող բան գրէ իրեն համար.
նրբամիտ քննադատը պատասխանեց խնա-
նէպէտի տառքն Գեօք Գիւնայ Կան Ե-
հիք շէշէ «Գալաթիք» մը, եւ իշխանն, ոչ նուազ
նրբամիտ, յիսուն շիշ զրկեց անոր:

Քանի որ տեղն եկած է, յիշենք հե-
տեւեալ հանճարեղ ու զուարթ պատմու-
թիւնն, որ քաղուած է Ռէլէ-Է Էնթերնաթ-
Նալի վերջին թիւերէն միոյն մէջ Ֆրանսա-
կան Ակադեմիոյ անդամ Պ. Լ. Բայերընի
վրայ հրատարակեալ հետաքրքրաշարժ տե-
ղեկութիւններէ:

« Օր մը, կ'ըսէ յօդուածագիրը, Բայեր-
ըն հրաւիրեց զիս Օրէնսի Կալուին, եւ
որոշեալ ժամուն անդ գնացի:

« Կը յիշեմ թէ նոյն վայրկեանին փոթո-
րիկ մը կը ծագէր:

« Բայերընն ներս մտաւ ջրաթաթաւ
այլ զուարթագէտ, եւ ըսաւ ինձ.

— Երէք, սիրելի՛ բարեկամ:

— Ի՞նչ, հովանո՞ց մը:

— Աղկէ աղէկը. շանթարգել մը:

— Տեսնենք ի՞նչ է:

— Նիւթը վրաս չէ, բայց կրնամ նկա-
րագրել զայն:

— Ուշադիր մտիկ կ'ընեմ:

« Եւ այն ատեն, բացատրելով ինձ թէ
ամեն կողմէ վրան կը թափէին իրմէ ձե-
ռագիր խնդրելու համար, ըսաւ թէ այս
առթիւ անդրդ ուելի որոշում մը տուած
էր: Այնուհետեւ, միմիայն երկու տեսակ
ձեռագիր պիտի տար, միշտ միեւնոյնն, նը-
մանօրինակ:

— Սեռին համեմատ, մին կամ միւսը
պիտի տամ, բայց միմիայն այս երկուքը:

« Եւ հետեւեալ երկու սիրուն քառեակ-
ներն արտասանեց իմ առջեւ.

ՄԱՐՆՅ ՀԱՄԱՐ

Քանի մը տող թուղթի կտորի մը վրայ: Կ'ընդունիմ
բայց կ'ուզէք գիտնալ իմ ներքին մտածմանս խորը՝
Սպիտակ, այդ թուղթի կտորն գէթ սանթիմ մը
կ'արժէր...

Այժմ այլ եւս ոչինչ կ'արժէ:

ԿԱՆԱՆՅ ՀԱՄԱՐ

Իսկ անմեկնելի եւ միշտ բացատրեալ
Կինը դործի մ'է որ թէ՛ կ'երգէ եւ թէ՛ կը պոռոչէ՝
Ոյր ամուսինն կոյրի դեր կը խաղայ
Եւ սիրահարն ալ բականինի:

Վերադառնալով բուն խնդրոյն, ըսենք թէ նշանաւոր հաւաքածոյներ կը յիշատակուին, որպէս Կիզլի, Քուզէնի, Սէնթ-Պէօլի, Մինեէի, Ֆէօյեէ տը Քոնշի, Տանթիւի եւ այլոց հաւաքածոյներն: Բայց այժմ այդ եռանդն մարած է. ձեռագիրն այսուհետեւ դասական եղած է: 1860 ին կազմուած ընկերութիւն մը անոր ճաշակը կը մշակէ; եւ այսօր մասնաւոր հրատարակչաց, արտօնագրեալ անձանց դիմելու է ունենալու համար երաշխաւորեալ ձեռագրեր, աժան կամ սուղ գնով: Քսան Ֆրանք տալով, Վիքթոր Հիւկոյի մէկ երկտողը կ'ունենաք. առանհրկնդ Ֆրանքով կը գնէք հոչակաւոր երգիչ Քաբուլի քանի մը տող ձեռագիրը: Նոյն իսկ երեք Ֆրանք տալով կարելի է դանել նամակներ որք հանրածանօթ անուններու ստորագրութիւնը կը կըրեն, եւ որոց անարժէք լինելուն պատճառն է գրուած նիւթին ոչնչութիւնը, կամ հեղինակին այդ տեսակ գրուածոց առատութիւնը:

Իրաւ է թէ ձեռագիրներ կան որք մեծ կարեւորութիւն եւ հետեւաբար մեծ արժէք ունին: Ի Փարիզ, Տրուօյի ապարանին մէջ վերջերս կատարուած վաճառմանց միջոցին, Վիքթոր Հիւկոյի առ Տիկին Տորվալ՝ հոչակաւոր դերասանուհին ուղղած մէկ նամակն 91 Ֆրանքի ծախուեցաւ՝ գրական տեսակէտէն ընծայած կարեւորութեան համար:

Աւստիկ մեծ Բանաստեղծին նամակը.

« Հիասքանչ Թիզլէդէ իմ,

« Կիմացնեն ինձ թէ Օտէոնի թատրոնը մտած էք: Կը շնորհաւորեմ Օտէոնը: Ձեր երեւումն մեծ երջանկութիւն մը պիտի լինի մեզ համար:

« Կը ճանչէք անշուշտ Պ. Օկիւսթ Վալլերի անունն եւ տաղանդը: Նոր սերընդեան առաջնակարգ եւ ազնուագոյն հանձարէն մին է նա:

« Բանաստեղծ մ'է բառին բարձր նշանակութեամբ: Յիշ գեղեցիկ թատրերդ մ'ունի որ ընդունուած է Օտէոնի մէջ, եւ այս խաղին մէջ գեղեցիկ դեր մը զոր կը փափաքի որ դուք խաղաք: Պ. Վալլերի կը ցանկայ այս մասին խօսիլ ձեզ հետ եւ մօ-

տերս ձեզ պիտի ներկայանայ: Կը կարծեմ թէ իւր դործն մեծ յաջողութիւն պիտի ունենայ եւ խորին ազդեցութիւն մը պիտի ընէք անդ: Տեսէ՛ք եւ կարդացէ՛ք:

« Գալով ինձ, պիտի սքանչանամ երբ օր մը Պ. Վալլերի եւ դուք միանգամայն շնորհակալ լինիք ինձ:

« Բոլոր մեծարանքներս կը դնեմ ձեր ոտից առջեւ

Վ.ԻՔԹՈՐ ՀԻԿԿՈ

30 Յուլիս 1842

Խնդրոյ նիւթ եղած խաղն է Ֆրանսա. բառասուն երկու տարի սպասած է ներկայացման համար եւ 1835ին, նոյն Օտէոնի թատերաբեմին վրայ, ունեցած է այն վառուոր եւ գրական յաջողութիւնն որ 200 անգամ ներկայացնել տուած է դայն:

* * *

Եթէ ձեռագիրէն գրաբանութեան անցնինք, կը տեսնենք որ իբր նշանաբան կ'ընդունի Շէքսպիրի մէկ ոտանաւորն.

« Տո՛ւր ինձ կնոջ մը դիրն եւ ըսեմ քեզ իւր բնաւորութիւնն »:

Եւ անոր կը միացնէ նշանաւոր ոտիկանապետի մը սա խօսքը.

« Մարդու մը երեք տող գրով կարելի է կախել տալ զայն »:

Ուրեմն նպատակը որոշապէս ցոյց տրուած էր. կը մնար միայն փորձառութեան օգնութեամբ անոր օրէնքները կազմաւորել: Ուստի Լալաթէր եւ Պ. տը Ժուլ փրնտընցին:

Գտա՞ն: Յայտնի չէ. որովհետեւ իրենց աշխատութիւններէն կը մնայ մեզ միայն Կէօթէի մէկ նամակին կտորը: Գերմանացի մեծահռչակ մատենագիրն սա բառերով կը պարզէր իւր կարծիքն այս մասին.

« Այդ բանին մէջ աւելի զգացման գործ կայ քան որոշ գիտութիւն. կարելի է այդ մեթոտով յաջողիլ քանի մը մասնաւոր պարագայից մէջ, բայց սա գաղափարը թէ այդ ամենէն ի մի ժողովելով յատուկ գրութիւն մը յօրինուի, շատ գոհաբաւ կը յաջողի »:

Գրաբանութիւնը գոյութիւն ունի սակայն: Ունի իւր մեծ-բահանայն, Պ. Տէպա-

բօլ • ունի իւր սկզբունքներն՝ որոնցմէ մէկ քանին պիտի յիշատակենք իբր հետաքրքրաշարժ ինչ։

Ազնուապետական բնաւորութիւնը երեւան կ'ուզան գրեթե մէջ ձեւերու կանոնաւորութեամբ։ Փափուկ անձինք կը մատնեն իրենք զիրենք գրեթե հակումով, հակում որ նոյն նամակին մէջ իսկ զգայականութեան հետ կ'առաւելու։ Նթէ մարդ նախ եւ առաջ զգայուն կերպիւ գրէ եւ հետզհետէ բորբոքի, գիրն ուրիշ կերպարանք մը կ'զգենու • գրիչը խօլ շարժումներ ունի, եւ ամեն կանոնաւորութիւն կ'անհետի սողերուն եւ բաւերուն մէջ։

Արդարադատ մարդիկ միշտ բաւական միջոց կը թողուն իրենց բաւերուն ինչպէս եւ տղերուն միջեւ, զգուշանալով որ սողի մը տառերը նախընթաց տողին տառերուն հետ չխառնուին։ Պաշտօնեայք եւ ընդհանրապէս լուրջ եւ գործի մարդիկ բոլորովին վարչական հոգ մը կը տանին ճշգրիտ կէտադրութեան համար • անհնար է որ շեշտ մը կամ մակակէտ մը պրծի իրենց ուղարկող գրիչէն։

Որովհետեւ մինչեւ ցարդ լատին տառերու վրայ եղած են սոյն օրինակ ըննութիւնք, ուստի մենք ալ կը հարկադրուինք ֆրանսական տառ մ'առնուլ իբր օրինակ։ Նրբ է տառն ուղիղ եւ բարձր գրուած է եւ հորիզոնական փոքրիկ դիծն ալ դէպ աջ ծռած, ցոյց կուտայ իշխելու բնազդ ունենք։ Այդ է տառն արդէն շատ մը գրեթե բանալին է, եւ գրաբանութեան մէջ տիպար տառը կը կազմէ։ Փոքր եւ զօրեղապէս գրծեալ, նշան է հաստատանութեան։ Նթէ հորիզոնական դիծն երկար եւ ծռած է, կարելի է կռահել բուռն բնաւորութիւն մը։ Վերջապէս թոյլ եւ անաղղ ու մարդիկ չեն դնել սոյն հորիզոնական դիծն, եւ սովորաբար դէպ ի վար իջնող գիր մ'ունին, որոյ բարձր ու ցած տառերը ցոյց կուտան արիութեան պակասութիւն։

Ստորագրութեանց վերջը գրուած հիւստին ալ նաեւ առաջնորդ մ'է գրաբանութեան մէջ • բարձր բնաւորութիւնք ի յայտ կուգան հիւսակին բացակայութեամբ կամ անկարեւորութեամբ, օրինակի համար՝ Վիքթոր Հիւկօ, Նաբօլէոն, Լիւդրէ, Միշլէ։

Վաճառականք ընդհակառակն կ'ընտոյն

հիւսակներ կը գործածեն։ Նոյն բանը կարելի է դտնել, թէեւ ուրիշ պատճառաց համար, որմնադրական զանազան օթեակներու վերաբերող անդամաց քով։

Սրածայր քաշուած վերջատառերն նշան են հաստատանութեան • թեթեւ, ցոյց կուտան տկարութիւն։ Միջակ բնաւորութիւնք փոքր գիր մ'ունին առանց ձեւի յարմարութեան, եւ հիւսակն ալ սովորական ձեւ մ'ունի։

Մաղթելու է որ այդ նորածին գիտութիւնն կաարեւադործուի, գիտութիւն որ արդարեւ շատ պատրանքներ պիտի փարատէր։ Սակայն ինչ որ ալ լինի, այդ գիտութիւնն որոշ հիմանց վրայ հաստատել ուղղներն յիշելու են միշտ Լա Պրիւյէէրի սա առածն • «Պէտք չէ զմարդիկ դատել այնպէս որպէս կը դատենք պատկեր մը առաջին անգամ եւ միայն մէկ անգամ տեսնելով ներքին մը եւ սիրտ մը կան յորս պէտք է թափանցել»։

ՀԱՍԿԱՔԱՂ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՆՐԵԿՈՅԵԱՆ ԴՊՐՈՅՔ

Ի Ն Ի Լ Ե Ո Ր Ք

Նիւ-ԵՈՐԻ, Փետր. 48

Նրէկ երեկոյ գացի այցելել այս քաղաքին երեկոյեան դպրոցներէն մին, եւ իբր երկու ժամ ներկայ գտնուեցայ այլեւայլ դասախօսութեանց՝ ութ կամ ինն տարբեր դասարաններու մէջ։ Այդ ցաւիմ որ երկար ժամանակ շունիմ ընդարձակօրէն նկարագրելու դպրոցին չէնքը, կարգերն ու կանոններն եւ այլ դիւրութիւնները՝ զորս պատրաստած է այս քաղաքին կրթական ժողովն ներկայ եւ ապագայ քաղաքացւոց կրթութեան համար։

Նրեկոյեան դպրոցը Նիւ-Եորքի, ինչպէս նաեւ Ամերիկայի ուրիշ մեծ քաղաքաց, են հասարակաց Նախախնարան, Բարձր եւ Քերականութեան դպրոցներն, յորս կը յաճախեն քաղաքացւոց զաւակները ցերեկ տոնն, եւ երեկոյները՝ այնպիսիք որ պատահութիւն

չունին դպրոց երթալու ցերեկներն, կամ օտարագլխի որ այս երկիրը կուգան եւ չեն գիտեր անգլիերէն խօսիլ, կարդալ եւ գրել :

Նախնական կրթութիւնն Ամերիկայի, մանաւանդ Նիւ-Եորքի մէջ, է Բալթիմօրի ճրի բառին բովանդակ նշանակութեամբ : Ծընողը ուղղակի ոչինչ կը հատուցանեն իրենց զաւակաց կրթութեան համար, եւ շատ դպրոցներու մէջ զասագիրք եւ դպրոցական ամեն պէտքեր յէ կը տրուին աշակերտաց : Նոյնպէս երեկոյեան դպրոցներու աշակերտք յէ կ'ընդունին դասագիրք, թուղթ, գրիչ եւ թանաք :

Հասարակաց դպրոցք են ընդհանրապէս չորս կամ հինգ յարկ բարձր հոյակապ շէնքեր, զորս իրաւամբ կ'անուանեն Ա. Բ. Գ. ի պալատներ հեղինակն « Բալթիմօր » վէպին : Այս հոյակապ շէնքերն կառուցուած են իւրաքանչիւր քաղաքի ծախքով, եւ այնպիսի յատակագծերու վրայ որոց հաւանած են կրթական ժողովոյ անդամք, յորս կան նշանաւոր գիտուններ, ուսուցիչներ, բժիշկներ եւ իրաւագէտներ, որոնք գիտեն թէ աշակերտաց մտաց կրթութեան, մարմնոյ առողջութեան եւ հանգըստեան համար ի՞նչ բաներ հարկաւոր են :

Վերոյիշեալ երեկոյեան դպրոցը դացի ընկերակցութեամբ սարսկաստանցի հայ երիտասարդի մը՝ որ աշակերտ է այն դպրոցին : Ձմեռը հոս շատ սաստիկ է, եւ երէկ երեկոյ օդն այն աստիճան ցուրտ էր որ կը կարծէի թէ երեկոյեան դպրոցի աշակերտներէն շատերն ցերեկուան տափանելի աշխատութենէ ետքը պիտի չուզէին այն ցուրտ օդին իրենց սենեակներէն դուրս ելնել դպրոց երթալու համար : Սակայն կարծիքս ուղիղ չէր :

Երբ մտանք այն փողոցն որուն մէջ է դպրոցը, տեսայ մեր առջեւէն տարբեր հասակէ երիտասարդաց եւ արանց խումբեր որ արագեւտլ իրենց քայլերը կը փութային վայրկեան մ'առաջ հասնիլ դպրոց : Ետի դարձայ, եւ տեսայ ուրիշ խումբեր որ նոյնպէս արագ արագ կը քայլէին : Այն ինչ մտանք դպրոցի դռնէն ներս, չուզով ջնուցուած օդն սկսաւ զարնել մեր ցրտէն կարկամած երեսներուն այնպիսի հաճելի կերպիւ, ինչպէս ամբան տաք եղանակին կը

փչէ մարդոց երեսին քաղցրասիւք զեփիւռը :

Դպրոցի ամենէն վարի յարկը յատկացեալ է տղայոց զրօսանաց, մարմնամարզական կրթութեանց եւ բնական կարեաց տեղերու : Ասոնց ամենքն, ըստ իմ կարծեաց, մաքրութեան, զիւրութեան ու յարմարութեան մասին բան մը պակաս չունէին : Գանի մը վայրկեան այս յարկը պտտելէ ետքը փութացինք ելնել վեր դպրոցին տնօրէնը տեսնելու, որպէս զի հրաման առնէինք դասարաններն այցելելու : Բարեբախտաբար դեռ դասերն սկսած չէին, եւ շատ մը սանդուղներէ վեր ելլելով հասանք ընդարձակ սրահներէն մին, ուր էին տնօրէնն եւ դասատուներէն ոմանք : Մինչ կը պատրաստուէի տնօրէնին ներկայանալու, երիտասարդ մ'եկաւ ձեռքս թոթուելու, եւ սկսաւ հետս խօսիլ իրրեւ ծանօթ : Երիտասարդն էր բժշկութեան ուսանող եւ մին ի դասատուաց այս երեկոյեան դպրոցին : Երբ հասկըցաւ թէ դպրոցն այցելելու եկած էի, ներկայացուց զիս տնօրէնին, եւ քաղաքավարութեամբ առաջարկեց երթալ նախ իւր դասարանը : Դասարանն էր բաւական ընդարձակ մաքուր սենեակ մը՝ որոյ կարասիքն էին վայելուչ գրասեղաններ, խոշոր սեւ տախտակներ, աշխարհագրական և այլ քարտէսներ : Այս դասարանի աշակերտք էին ընդհանրապէս Գերմաներէն խօսող Աւստրիացիներ եւ մի քանի զուլիցերացի եւ գաղիացի պատանիներ, երիտասարդներ եւ չափահաս մարդեր : Աշակերտք էին թուով իբր 35, եւ անոնց տարիքն էր 12էն մինչեւ 45 : Ասոնք նոր սկսած էին, եւ կ'ուսանէին անգլիերէն կարդալ, հեղել, գրել եւ խօսիլ : Դասատուն փափկութեամբ կը վարուէր աշակերտաց հետ, եւ իւրաքանչիւրին տալով կարգաւ Անգլիերէն ընթերցարանէ մը զիւրին հատուածներ, կ'ուղղէր կամ միւս աշակերտաց ուղղել կուտար շեշտի եւ հնչման սխալներն, եւ կը հարցունէր Անգլիերէն բառերու եւ սարքերութիւններու նշանակութիւնն : Աշակերտք բառերու նշանակութիւնը կը բացատրէին Գերմաներէն, զոր քաջ կը խօսէր դասատուն : Յետոյ դասատուն ուղղագրութեան վարժութիւններ ընել տուաւ աշակերտաց, եւ աշակերտք իրենց տետրակներուն մէջ գրեցին հանդերձ Գերմաներէն նշանակու-

Թեամբ 13 բառ այն երեկոցեան դասէն : Որպէս զի ժամանակ ունենամ միւս դասարաններն ալ այցելելու , դասատուին շնորհակալութիւնս յայտնելով մեկնեցայ դասարանէն , եւ դացի բովի դասարանը :

Այս դասարանի ուսուցիչն ալ էր երիտասարդ ուսանող մը : Աշակերտք էին աւանտմեծ մասամբ դերմանացի պատանիներ եւ երիտասարդներ աւելի յառաջացած Անգլիերէնի մէջ քան միւս դասարանի աշակերտք : Ասոնք էին թուով աւելի քան միւսներն , եւ խօսակցութեան վարժութիւններ կ'ընէին , եւ դասատուին առաջարկութեան ու հարցման համեմատ կը նշկարագրէին այլեւայլ առարկայներ որ կային դասարանի մէջ : Մինչ այս դասարանն էի , կրթական ժողովոյ կողմէն քննիչ մ'եկաւ դպրոցին տնօրէնին հետ աշակերտները քննելու : Քննիչն առաջարկեց դասատուին բերանացի կրթութիւններ ընել տալ աշակերտաց , եւ այս միջոցին ինք աչքէ անցուց ներկայութեան տետրակն , աշակերտաց գեղադրութեան եւ չարագրութեան տետրակները : Յետոյ քննիչն աշակերտաց կարգալ եւ թարգմանել տուաւ Անգլիերէն ընթերցարանէ այլեւայլ հատուածներ , եւ շեշտի ու արտասանութեան սխալներն ուղղեցին միւս աշակերտք , որոնք իրենց ձեռուները վեր վերցունելով կ'ուզէին հասկցունել քննիչին թէ դիտողութիւններ ունէին իրենց դասակցին ընթերցանութեան վրայ : Քննիչն ըրաւ նաեւ իրաւարժական հարցումներ , որոց դոհացուցիչ պատասխաններ տուին աշակերտք : Քննիչն մասնաւոր դիտողութիւն ըրաւ որ աշակերտք խօսքի մը բոլոր մասերը մէկտեղ ըսելու յատուկ փոյթ տանին . զոր օրինակ , կապ ի՞նչ բանէ կը շինուի հարցման՝ չպատասխանեն միայն ըսելով « Ածուխէ » , այլ ըսեն « Կաղը կը շինուի ածուխէ » եւ « Կաղը կը շինուի կաղարանի մէջ » , որ դպրոցէն դուրս եւ բաւական հեռու տեղ մ'է : Քննիչն իւր դիտողութիւնները նշանակելէ ետքը գրպանի տետրակին մէջ , մեկնեցաւ դասարանէն եւ գնաց քննել միւս դասարաններու աշակերտները :

Երրորդ դասարանի աշակերտք եւս էին մեծաւ մասամբ Գերմանացիք , եւ չէին թուով այնչափ շատ որչափ առջի երկու

դասարաններու աշակերտք : Քննիչն այս դասարանի աշակերտաց եւս տետրակներն աչքէ անցուց , եւ քննեց զանոնք թարգմանութեան , ընթերցանութեան եւ հեգելու դասերուն մէջ : Մասնաւոր դիտողութիւն ըրաւ ի գիրը հնչելու մասին Գերմանացւոց եւ Անգլիացւոց մէջտեղ եղած տարբերութեան վրայ , եւ օրինակներով բացատրեց թէ Գերմանացիք ի՞նչպէս հնչելու են Անգլիերէն ի գիրը :

Ուրիշ դասարանի մ'աշակերտք էին մեծաւ մասամբ Պոհեմիացիներ , եւ անոնց դասատուն քաջ կը խօսէր Պոհեմերէն եւ Անգլիերէն միանգամայն : Այս դասարանի աշակերտք եւս տարբեր հասակէ եւ տարբեր կարգերէ մարդիկ էին , եւ անոնցմէ շատերն այս երկիրն եկած էին առանց գիտնալու Անգլիերէն բառ մը , եւ հիմա կը հասկնային բաւական ինչ որ կը լսէին եւ կը կարգային :

Հինգերորդ դասարանի աշակերտք էին Սպանիացիներ , եւ անոնց ուսուցիչն էր թերեւս սպանիացի երիտասարդ մը : Թերեւս , կ'ըսեմ , վասն զի քաջ կը խօսէր թէ՛ Անգլիերէն եւ թէ՛ Սպանիերէն : Այս աշակերտք ուղղադրութեան վարժութիւններ կ'ընէին , եւ անոնցմէ մին սեւ տախտակի վրայ եւ մնացեալք իրենց տետրակներուն մէջ կը գրէին այլեւայլ իրերու , զոր օրինակ երկրի , ծով , փողոցներս , սահմաններն եւ համառօտ նկարագրութիւններ :

Ուրիշ դասարանի մ'աշակերտք կ'ուսանէին թուաբանութիւն , եւ որովհետեւ դասատուն զբաղած էր , չկրցայ ստուգել թէ աշակերտք ո՞ր երկրէ եւ ո՞ր ազգէ էին :

Եօթներորդ դասարանն էր բուն անօրէնին կամ մեծաւորին դասարանը : Այս դասարանի աշակերտք էին հասակաւ փոքր , եւ ամերիկացի կամ անգլիախօս ծնողաց զաւակներ . բայց երբ այս դասարանն այցելեցի , աշակերտք դաս չունէին , վասն զի անօրէնը կրթական քննիչին հետ դասարանները կը պտըտէր աշակերտները քննելու համար :

Ութերորդ եւ իններորդ եւ մնացեալ դասարանք էին միւսներուն նման : Բոլորին աշակերտք եւս տարբեր երկիրներէ , տարբեր լեզուներէ եւ տարբեր հասակէ պատանիներ , երիտասարդներ եւ չափահաս այրեր :

Դասատուաց քաղաքավարութիւնն եւ աշակերտաց փոյթն ու ջանքն արդարեւ գոյութեան արժանի են : Նիւ-Եորք քաղաքն մարդասիրութեան եւ միանգամայն իմաստուն խնայողութեան գործ կը կատարէ նորեկ քաղաքացեաց կրթութեան համար ծախք ընելով մեծ գումարներ , գիտնալով թէ ո՛րչափ աւելի չափ ծախք ընէ դպրոցաց համար՝ ա՛յնչափ աւելի քիչ ծախք ընել պիտի ստիպուի բանտերու եւ անկեղծոցներու համար , եւ ապագայ քուէտուներն՝ որ մեծ բաժին ունին երկրին կառավարութեան մէջ , պիտի չըլլան անուսուսն :

Երեկոյեան դպրոցներու դասատուք , որչափ հասկցայ , չեն ցերեկեայ դպրոցներու դասատուք , եւ քաղաքին կրթական ժողովն անոնց համար առանձին ամսական կուտայ :

Երեկոյեան դպրոցաց մէջ , ինչպէս նաեւ ցերեկեայ դպրոցաց մէջ , կրօնական դաս չկայ , վասն զի աշակերտք տարբեր դաւանութիւններէ են , եւ կարելի չէ տալ այնպիսի կրօնական կրթութիւն որ ամենուն միանգամայն հաճելի ըլլայ : Արդէն ուրիշ ազգային եւ բարեսիրական հաստատութեանց մէջ կրօնական պաշտաման խընդիրը քաղաքական ծանրակշիռ խնդրոյ մը կերպարանք առած է , եւ բաւական կը յուզէ նշանաւոր քաղաքացւոց միտքերը : Սակայն թէ՛ ցերեկեայ եւ թէ՛ երեկոյեան դպրոցներու մէջ մասնաւոր փոյթ կը տարուի ընելու աշակերտները քաղաքավար , քաղցր առ միմեանս , բարեսէր , կարգասէր եւ մաքրասէր :

Երեկոյեան դպրոց կրնան յաճախել ամեն անոնք որ կը փափաքին , միայն պարտին յարգել դպրոցաց ներքին կանոններն , արբեալ չերթալ դպրոց , եւ դպրոցէն տըրուած դրժերն եւ այլ պէտքերը գործածել խնամով եւ զգուշութեամբ :

Դասատուք ունին իրենց բոլոր աշակերտաց հասցէներն , եւ երբ աշակերտ մը երկու կամ երեք երեկոյ բացակայ լինի դպրոցէն , դասատուն թղթատարական քարտէսով մը կը հրաւիրէ զնա դպրոց շարունակել , եթէ հիւանդ չէ կամ չունի ուրիշ արգելիչ պատճառ :

Ի հակիրճ բան , երեկոյեան դպրոցներու մէջ կ'ուսուցուին բոլորովին ձրի հետեւ-

եալք . Ընկերցանութիւն Անգլիէն , Հեգել եւ Կանտի ընթերցում բառերը , Թոմաս Կոմպէն , Գեյտիք-Էն , Ալ Խարհաբո-Էն , Անգլիէն Գերայանութիւն , Թարգմանութիւն այլեւայլ լեզուներու որովք կը խօսին ուսանողներէ շատեր , Խօսակցութեան վարժանքներ , Տոմարակալութիւն , Շարարութիւն եւ այլ օգտակար իրեր : Դպրոցին աւարտելէն առաջ ընկերիս հետ վար իջանք դուրս ելնելու համար , եւ դռնապան երիտասարդ մը թուղթ հարցուց : Հասկցայ թէ անգամ մը դպրոց մտնելէ ետքն աշակերտաց թոյլ չտրուիր դպրոցին աւարտելէն առաջ դուրս ելնել առանց տնօրէնին հրամանին :

Յաւալի է որ Նիւ-Եորք դանուած հայ գործաւորներէն քիչերը միայն օգուտ կը քաղեն երեկոյեան դպրոցներէն , եւ շատ Հայեր , որ եթկար տարիներէ ի վեր այս երկրին են , իրենց միտքը մեծ դժուարութեամբ կրնան հասկցունել Ամերիկացւոց :

ԵԱՆՔԻՆ

ՆՈՐԱՎԷՊ

Ի ՊԱՐՆԱՆ

Բնութիւնն իւր ձմեռնային թմրութենէն սթափած էր արդէն եւ դարնան առաջին գեղեցիկ օրերն սկսած էին . կանաչ սաւան մը կը ծածկէր դաշտն ու մարգագետինը : Օդին հրապուրիչ եւ անուշաբոյր ջերմութիւնը կը խտլէր մարդուն ջիւերը , կը ճնշէր եւ կը յուզէր կուրծքն եւ կարծես թափանցելով մինչեւ սրտին խորը , հաճոյալից եւ խռովոյցոյդ դրդիւ մը յառաջ կը բերէր , անսահման երանութեան անյադ տենւէր , անսահման երանութեան անյադ տենւէր , անսահման երանութեան անյադ տենւէր : Զմբան խիստ եւ երկարատեւ օրերէն յետոյ , բնութիւնը կ'ազդէ ամենուն հոգւով եւ մարմնով վերականգնանալ եւ խայտալ :

Անգամ մը զարթնելով առաւօտուն , կանգնեցայ բաց պատուհանին սուջեւ : Տանեաց վրայէն կը տեսնուէին կապոյտ ամպերն , ոսկեղօծեալ արեգական առաջին ճառագայթները :

դայթներով: Ուրախ ճռուողով թռչուններ ծառէ ի ծառ կը թռչկոտէին, ջնանլով իրենց հեշտալուր դայլայիկներով գերազանցել զիրար: Դեղձանիկները, կախուած բաց պատուհաններէն, այն դիրքով կը մնային: Բոլոր յարկերէն երգերու ձայներ միայն կը լսուէին: Տուներու մէջ տիրող ուրախ շրմուկը մինչեւ փողոցը կը հասնէր եւ կը խառնուէր փողոցային զուարթ աղմուկին: Լուացուեցայ. տունը մնալ չկարողանալով, առի գլխարկս եւ դուրս ելայ չըջելու փողոցն, առանց գիտնալու ինչո՞ւ համար եւ ո՞ւր... Այն մարդիկ որոց կը հանդիպէի, կը ժպտէին ինձ շնորհալի եւ քաղցրահամբոյր կերպով մը... Աշխուժութիւնն, ուրախութիւնն եւ երանութիւնը թուէր թէ նորեկ գարնան անուշաքոյր եղանակին հետ ախուհալ էին ամեն ուրեք: Սիրոյ կախարդները քաղաքին վրայ կը սաւառնէին... Միայն մանկամարդ կանանց տեսքն իրենց առաւօտեան զգեստներու մէջ, ակամայ կը հարկադրէր սիրտս բաբախելու աւելի արագ եւ աւելի յուզիչ: Ինձ կը թուէր տեսնել նոցա աչքերու մէջ այնքա՛ն շատ թագուն խանդաղատանք ու սէր, քայլուածքի մէջ այնքա՛ն շատ գեղ ու վայելչութիւն: Ձգիտեմ ի՛նչպէս եւ ինչո՞ւ, ես զիս Սէնի դետափը դտայ: Շողենաւերը ամենայն ուղղութեամբ սպիտակ փրփրայից դժեր կը թողուին գետի ողորկ ջուրերու վրայ. յանկարծ բռնուն ցանկութիւն մը զգացի նստիլ անոնցմէ միոյն մէջ եւ դուրս երթալ քաղաքէն անտառը, շրջիլ դալարագեղ դաշտերն եւ շնչել թարմ օդը:

Նաւաստին առաւօտուն շատ կանուխ պատրաստ էր ծառայել ուղեւորաց. ամեն ոք ակամայ դուրս կ'ընէր իւր հեղձուցիչ բնակարանէն, ամենքը կը ցանկային քաղցր խօսակցութեան բռնուիլ դաշտային սիրուն գոտանաց մէջ: Շողենաւին վրայ ծաղկահասակ, փոքրիկ ու գեղեցիկ աղջիկ մը զըրացուհիս էր. հաւանօրէն նորասէր ուղբուհի մը: Ճշմարիտ Փարիզուհւոյ մը շնորհալի շարժումներն ունէր. խաբուիչահեր փոքրիկ դուխն ի վար խոսողներ կ'իջնէին յախուռն մինչեւ ականջներն, ուրտեղէն կը թափէին ծոծրակի վրայ, եւ թեթեւ հովերէն կը տատանէին օդին մէջ ու կը ծածկէին նորա սիրուն դուխը:

Հայեացքս յառած էի նորա վրայ. զգաց դայս, գլուխն իմ կողմն դարձուց եւ զըրգուած իմ յանդգնութենէն, դժգոհութեամբ խոնարհեցուց աչքերն. այն ժամանակ թեթեւ խորշումը, ժպիտի փոխուելու սպասարտո, երեւցաւ նորա փոքրիկ բերանի մէկ անկիւնն:

Միապազաղ գետը դարիւ դարիւ կը դըլորէր իւր անդուսպ կոհակներն: Օդին մէջ խորին լուռութիւն կը տիրէր, լուռութիւն դոր բնութեան կենդանի խօսքը միայն կը խանդարէր: Իմ դրացուհիս շուտով վեր բարձրացուց աչքերն եւ իմ կողմն դարձուց՝ այս անգամ յայտնապէս ժպտելով: Գրաւիչ եւ հիանալի էր նա... աչքերուն մէջ այնքան նոր բան կարդացի որոց մինչեւ այն ժամանակ անտեղեակ էի: Այնտեղ տեսայ ես... Օ՛, բայց ի՛նչ չտեսայ այդ հայեացքի մէջ. ըզգացման անսահման խորութիւն մ'եւ կախարդիչ քնքոյչ ճքնաղութիւն մը... բոլոր այս բանաստեղծութիւնը կը սպառէ մեր գլուխը, լըցնելով զայն քաղցր բանդազուշանքներով: Անվրտ ու յանդուգն գաղափար մը անցաւ մտքէս. կ'ուզէի ցատկել նորա մօտ, բանալ դիրկս, ամուր մը սեղմել զայն կրծքիս վրայ, շրթունքս մօտեցնել փոքրիկ ականջին եւ սիրոյ քաղցր խօսքեր շնչել նմա:

Արդէն պատրաստուած էի բանալ բերանս եւ խօսիլ, երբ մէկը կամացուկ մը զարկաւ ուսիս: Նստիս դառնալով՝ իմ մօտ տեսայ մարդ մը, որ ո՛չ շատ երկտասարդ եւ ո՛չ շատ ծեր էր, և տխրութեամբ ու կարեկի հայեացքով զիս կը դիտէր...

— Կը ցանկայի քիչ մը խօսիլ ձեզ հետ, ըսաւ:

Նս դէմքս ակամայ ծռմուկի, եւ այս անշուշտ չմրիպեցաւ նորա ուշադրութենէն, որովհետեւ յարեց.

— Այդ անհրաժեշտ է:

Ճար չկար. ելայ տեղէս եւ հետեւեցայ նմա մինչեւ շողենաւին միւս ծայրը:

— Պարոն, ըսաւ, երբ կուգայ ձմեռն իւր սառնամանիքներով, անձրեւով ու ձիւնով, ձեր բժիշկին ամենեւին չյոգնիր ամեն օր յիշեցնելու ձեզ թէ տաք պահեցէք ձեր ոտքերը, զգուշացէք մսեղէ, հարբուխէ, ցնցղատապէ, կրծացաւէ: Այս ամենուն հաղարուոր նախազգուշութիւն կ'ընէք, ասուի ներքնակներ կը հագնիք, տաք հագուստ-

ներ եւ կրկնակօշիկներ, եւ այս ամենը շատ անգամ չէն արգիլեր ձեզ դռնէ երկու ամիս պառկելու անկողնոյ մէջ: Բայց երբ կուգայ գարունը, երբ գոյնզգոյն ծաղիկներ կը սփռեն իրենց անուշաբոյր հոտն, եւ զերիւսը կուգայ վերակենդանացնել ճշնշըւած սիրտդ, հաճոյալից սրտայոյզ ցանկութիւն մը կը ծնի ի քեզ. թուի թէ բան մը փնտռել կ'ուզես. այն ժամանակ ոչ ոք, ոչ ոք կուգայ ձեր մօտ ըսելու. «Չգուշացէք սէրէն, նա ամեն ուրեք ձեզ կը լրտեսէ, ամեն մի անկիւն կրնաք հանդիպիլ նորա որդայթին, նորա դէնքը պատրաստ է եւ սուրը սրած. իւրաքանչիւր քայլափոխին կրնաք նորա խորամանկութեան անբաղդ զոհն լինիլ... Ո՛հ, զգուշացէ՛ք սէրէն, զգուշացէ՛ք սէրէն: Նա առաւել վտանգաւոր է հարբուխն եւ միւս հիւանդութիւններն, եւ կ'ստիպէ մարդս որ անօրինակ յիմարութեանց դիմէ»: Այո՛, պարոն, ըստ իմ կարծեաց, կառավարութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր տարի պատերուն վրայ ահագին յայտարարութիւններ փակցնել որոց վրայ գրուած լինի. «Քարնան վերադարձը: Քաղաքացի՛ք, զգուշացէք սէրէն»: Այս բանը պէտք է գրել նաեւ իւրաքանչիւր տան դռան վրայ: Բայց որովհետեւ դժբաղդաբար կառավարութիւնը չընէր զայս, ի՞նչ ընելու է, ես կը պարտաւորիմ փոխանակել նորա տեղը, ուստի կ'ըսեմ. «Չգուշացէք սէրէն, նա արդէն մօտեցած է ձեզ: Նուիրական պարտականութիւն մը դրուած է վրաս, այն է նախազգուշացնել ձեզ ճիշդ այնպէս, որպէս կ'ընեն ի Ռուսիա ձմեռն, երբ կը հանդիպին ուղեւորի մը՝ որոյ քիթը ցուրտէն ձերմկցած է »:

Բոլորովին ապշած էի այս օտարտի բացատրութենէն. ինքզինքս ժողովելով ծանրութեամբ մ'ըսի.

— Բայց ներեցէք, պարոն, դուք կը միջամտէք գործի մը, որ ձեզ չվերաբերիր բնաւ:

Նա նայեցաւ ինձ խորին կարեկցութեամբ եւ պատասխանեց.

— Ո՛հ, պարոն, պարոն, միթէ մարդս երբ կը տեսնէ իւր մերձաւորն ծայրագոյն վտանգի մէջ, կարո՞ղ է անտարբեր լինիլ նորա կորստեան վրայ: Իրաւացի չե՞մ: Ահանջ դրէք իմ պատմութեանս եւ այն ա-

տեն դուք կը հասկնաք թէ ինչո՞ւ համարձակեցայ այս կերպով խօսիլ ձեզ հետ:

Վայրկենէ մը սկսեց իւր պատմութիւնն.

— Անցեալ տարի ճիշդ այս ժամանակ էր... Նախ եւ առաջ պարտք կը համարիմ յայտնել ձեզ թէ ես ծովային դործոց մէջ կը ծառայէի, ուր մեր պետերն պայական փայլուն երկզներ կը կրէին միշտ: Պաշտօնատուէս տեսայ կապոյտ երկնից նեղ շերտ մ'ուր կը ճախրէին ծիծեռնակները, ես ալ պատրաստ էի ցատկընել գրասենեկիս մէջ, եւ պարել թուղթերու շեղջերուն վրայ: Աղատութեան տենչը խիստ զօրաւոր եղած էր յիս. այդ միջոցին ես կ'զգայի թէ որքան անարդէ անկախ տրարած չլինէի: Այլ եւս չլըրցայ համբերել. դնացի կապկիս մօտ (այլապէս չեմ կարող անուանել իմ պետս), փոքրահասակ արարած մը՝ որոյ ատամներն կը կրճտէին միշտ եւ անպապար կը բաղխէին միմեանց: Ներկայանալով նմա՝ յայտնեցի թէ հիւանդ եմ: Նայեցաւ վրաս եւ գոչեց. «Զեմ հաւտար, կորսուէ՛ աչքիս առջեւէն...» Ես դուրս ելայ եւ Սէնի կողմն ուղղուեցայ: Նշանակն այս առուր նման էր, ճիշդ այնպէս. նաւ նստեցայ Սէն-Քլու երթալու համար: Այն, պարոն, պետը ի՛նչպէս չէր խճահարուեր զրկելով զիս այսպիսի զուարճութենէ մը... Կը թուէր թէ կը հալէի արեղական ճառագայթից ներքեւ: Ամեն ինչ ախորժ կ'ազդէր ինձ, չոգենաւը, գետը, ծառերը, տուները, իմ դրացիներս, մէկ խօսքով ամենքը... Կը ցանկայի գրկել, սեղմել կուրծքիս վրայ, բայց զո՞վ. — Զգիտէի... Սէնն էր այս որ իւր ցանցով կը պատէր զիս: Յանկարծ ի Թրոքատէրօ չոգենաւ մտաւ մանկաստանի օրիորդ մը, փոքրիկ ծրար մը ձեռքին բռնած, եւ նստաւ ուղիղ դիմացս: Սիրուն եւ հիւանալի էր նա... այո՛, պարոն, յոյժ սիրուն, դռնէ ինձ այնպէս կը թուէր... Աստ կարեւոր կը համարիմ նշանաւոր երեւոյթի մը վրայ դարձնել ձեր ուշադրութիւնն... Գարնային առաջին օրերուն մէջ բոլոր կանայք առաւել սիրուն կը թուին քան բնականն եւ քան որ են. նոքա այն ժամանակ հմայիչ ազդեցութիւն մը կ'ընեն վրայ: Ես կը դիտէի զայն աչքիս տակէն, ինքն եւս ժամանակ առ ժամանակ կը նայէր ինձ, ճիշդ այնպէս ինչպէս այժմ ձեր դրացուհին: Ի վերջոյ սիրային աղնարկներ

փոխանակելով անդադար, ես արդէն այնպէս համարեցի իբրեւ թէ ըստ բաւականին ծանօթացած ենք իրարու հետ, ուստի բոլորովին մօտեցայ անոր եւ սկսայ հետը խօսիլ: Նա պատասխան տուաւ.... Արդէն ձեզ ըսի թէ սիրուն էր, հետեւաբար գրաւուած էի իրով: Ի Սէն-Քլոս իջաւ շոգեհաւէն, ես ալ նմա հետեւեցայ: Յանձնարարութիւն մ'ունէր կատարելիք: Առաջարկեցի ընկերակցիլ իրեն. ընդունեց, եւ նորա հետ ըովէն կերթայի: Գարնանային եղանակի մոգական քաղցրութիւնն երկուքս ալ ստիպեց ազատ օդ ծծել.... «Անտառի մէջ ո՞րքան գեղեցիկ կը լինի այժմ»... ըսի ես: — «Ո՞րդ, կը ցանկա՞ք միասին գնալ անդ»: Խորազնին նայեցաւ վրաս, կարծես կարդալու համար իմ թագուն մոտադրութիւններս, եւ ապա, քիչ մը ժամանակ վարանելէ յետոյ, համաձայնեցաւ: Եւ ա՛հ, ձեռք ձեռքի տրւած, անտառի սղարթախիտ ծառերուն մէջ գտանք զիրար. իմ ընկերակցից, գարնանային անուշաբոյր օդով արբշխու, սկսաւ ցատկոտել, վազվզել որպէս սիրուն թռչնիկ մը.... Ես ի հարկէ չէի կարող հետեւիլ նմա: Ճշմարիտ չէ՞, պարոն. այն ժամանակ միթէ արդէն մենք անասնոց չէի՞նք նմաներ. ի վերջոյ յոգնեցաւ եւ ապա սկսաւ երգել.... եւ.... ի՛նչպէս երգել.... տարփանօք եւ խելայեղ.... քանի մ'եղանակներ Միւլէի գոսաներգութենէն: Ա՛հ, ո՞րքան վիպական չքնաղութիւն կը գտնէի նորա վրայ այս միջոցին.... Բայց ընդ հանրապէս բոլոր այս խելկատակութիւններ մարդուս գլուխը կը դըրաւեն: Ա՛հ, ձեզ կը հաւատտեմ թէ ո՛չ մէկ երգող կին այնքան վտանգաւոր է որքան նա որ քաղաքէն դուրս Միւլէի երգը կ'երգէ.... Բոլորովին յոգնելով, նստեցաւ դաւարաբեղ բլրակի մը կողք, ես ալ նստեցայ նորա մօտ եւ քնքոյ ձեռները ձեռներուս մէջ սռի.... Գեղեցիկ մատները ասեղէն մաշուած էին. չկրցայ ուշադրութիւն չդարձնել այս կէտի վրայ եւ ըսի. «Ա՛հա՛ աշխատասիրութեան նուիրական յատկանիշն»:

— Ա՛հ, պարոն, պարոն, գիտէ՞ք ինչ կը նշանակեն աշխատութեան այս սրբազան նշանները. նոքա կը պատմեն ձեզ, կը յայտնեն արհեստանոցի մէջ՝ ըրած բանասրկութիւնները, դատարկախօսութիւնները. կը

պատմեն իրենց անմեղ կեանքն սպառող ամենօրեայ անմիտ խօսակցութիւններն եւ վաղանցուկ կեանքն, շատ կը խօսին նորա սահմանափակ զարգացման մասին, որ իւր մատանց ծայրերուն աշխատութեան սուրբ նշանները կը կրէ.... Է՛հ, խօսելու ալ ի՛նչ կար անդ.... Մենք երկար ու երկար միմեանց աչքերու խորը կը նայէինք.... Ա՛հ, սիրած կնոջ հայեացքն ո՞րպիսի իշխանութիւն ունի: Ի՛նչպէս կը յուզէ, կ'ալեկոծէ եւ կ'իշխէ մեզ.... ո՞րքան խորին գգուանքներով լի է նա.... կարծես քեզ կը կոչէ, կ'ըստիպէ սիրան ու հոգին թափանցել.... Բայց, պարոն, այդ ո՞րպիսի լիտի խաբէբայութիւն մ'է.... Ի վերջոյ գլուխս կը դառնար, խելայեղեցայ ես եւ գրկացս մէջ պինդ սեղմեցի նորա քնքոյ մարմինն.... Նա յետ քաշուեցաւ եւ ըսաւ. «Կորսուէ՛, անպիտան»:

Ծունդի վրայ եկայ նորա առջեւ, յայտնեցի սէրս եւ հաղարաւոր խոստումներ ըրի նմա.... Նա ապշած կ'երեւէր իմ յանկարծակի փոփոխման համար եւ դէպի ինձ ուղղեց հայեացք մ'որ կ'ըսէր. «Է՛հ, շատ լաւ է այս, սիրելիս, այժմ կը տեսնենք»: Պարոն, սիրոյ մէջ մենք այդ մարդիկս միշտ պարզ ու անկեղծ ենք, իսկ կանայք՝ միշտ դրական: Ի հարկէ այն ժամանակ ես կարող էի վայելել զայն. յետոյ հասկցայ յիմարութիւնը. բայց անկէ խնդրածս միայն մարմինը չէր.... մէկ խօսքով ամբողջ ժամանակս կորուսի զդացմանց զեղումը թափելու նորա առջեւ. նա՛ այս ամենը լսելով, ելաւ տեղէն եւ մենք մեկնեցանք ի Սէն-Քլոս: Մինչեւ Փարիզ չբաժնուեցայ անկէ: Վերադարձին այնքան տխուր էր նորա դէմքն, որ ես չէի կարող իմանալ նորա վշտին պատճառները: Նա պատասխան տուաւ. «Յաւ է ինձ բաժնուիլ այս օրէն. այսպիսի օրերն սակաւաթիւ են կենացս մէջ»: Սիրտս սաստիկ կը բարախէր, այնքան սաստիկ որ կարծես մուրձի հարուածներ էին: Հետեւեալ կիւրակէ դարձեալ տեսայ զայն. այս կրկնուեցաւ եւ միւս կիւրակները.... Կը տանէի զնա Պուժիվայ, Սէն-Փէրմէն, Մէզոն-Լաթիֆ, ամեն տեղ ուր լաւ է սիրահարաց.... Ստահակուհին իւր բոլոր ուժն կ'ապառէր ինձ հետ միշտ զբօսնելու համար: Ի վերջոյ բոլորովին կորուսի գլուխս եւ երեք ամիսէ յետոյ ամուսնացայ.... Ուրիշ ի՛նչ պիտի ընէի...

Միայնակ էի, չունէի ո՛չ ընտանիք, ո՛չ խորհրդատու.... Ե՛րբէին թէ կեանքը կնոջ հետ անչափ քաղցրութիւն ունի. ուստի.... ես ալ ամուսնացայ: Եւ վե՛րջը: Առաւօտէն մինչեւ երեկոյ կը վիրաւորէ նա ձեր սիրտը. կ'երեւի որ ոչինչ դիտէ եւ ոչինչ կը հասկընայ. անդադար կը բարբաճէ եւ կը նըւազէ Միւզէթը (ո՛հ, Աստուած իմ... ի՛նչ պէս կը տանջէ ինձ այդ երգը). կը կռուի ածխավաճառին հետ, դռնապանուհւոյն կը հաւատայ իւր տնտեսութեան դաղտնիքը. դրացուհւոյն կը պատմէ մեր ամուսնական դաղտնիքները, կ'անպատուէ ամուսինն. իսկ գլո՛ւխը.... գլուխը լցուած է ամենայնիւս պատմութիւններով, իմաստակ համոզումներով, քարասփիլի նախապաշարումներով, այնպէս որ ես յուսահատութենէս կուլամ, պարոն, ամեն անգամ որ կ'սկսիմ խօսիլ նորա հետ:

Բոլորովին յուզեալ, լռեց նա.... Կը նայէի նորա վրայ, եւ պատրաստ էի մխիթարական խօսքեր ըսելու այս դժբաղդ մարդուն, երբ շողենաւ կանգ առաւ: Սէն-Քլու հասած էինք. իմ հետաքրքիր օրիորդը դուրս ելնել կը պատրաստուէր, և իմ քովէն անցնելու ժամանակ քնքոյշ ու սիրաբորբոք հայեացք մը նետեց վրաս եւ ժպիտ մ'արձակեց.... Այս այն ժպիտներէն մին էր որք մարդուս խելքը կը թուցունեն բոլորովին. ապա ցատկեց նաւակամուրջին վրայ: Ես պատրաստուեցայ հետեւիլ նմա, բայց իմ խօսակիցս ամուր մը բռնեց թեւերէս. բռն շարժում մ'ընելով ազատեցայ ձեռքէն, բայց վերաբիւզեալ բռնելով ետ դարձուց զիս եւ ըսաւ. « Մի՛ երթաք, մի՛ երթաք » . այնքան բարձր արտասանեց այս խօսքերն որ ամեն ոք մեր կողմը դարձուց իւր գլուխը. մոլեգին ժպիտ մ'անցաւ դէմքիս վրայէն եւ ես պարտաւորուած էի անշարժ մնալ վերջին ատիճանի կատաղութեանս մէջ, չհամարձակելով ազնուկ հանել ծիծաղելի տեսարանի մը դիւցազն չլինելու համար:

Իսկ շողենաւն տակաւին կը թաւալէր....

Տխրադէմ եւ խոժոռեալ նաւակամուրջն իջայ, իսկ իմ անգութ ու աններողամտ պաշտպանս ուրախութենէն ձեռները շիւտով ըսաւ.

— Պարո՛ն, ամենամեծ ծառայութիւն մը մատուցի ձեզ....

ԿԻՒՅ ՏԸ ՄՈՐԱՍԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ք Ե Ր Դ Ո Ւ Ա Մ Ք

ՊՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՐԳՁԻ ԿԱՐՆԵՑԻՈՑ

Թ Ի Ի Ր Ք Մ Ա Ն Ի Ք

Ա

Արդաւներն որ մըտնան յերկինք՝ Հայրն Աստուած կը կատարէ իւր խոստացած վատերը. Պրասկներով կը զարդարէ դըլիւրին, Եաքութ՝ զմըտու մատնիներով՝ մատերը:

Երգերով հրեշտակք, կուսանք դէմ կու գան, Չաղկներով կը հրճուին միշտ յաւիտեան. Սրբբունաք կը փայլին աստղերու նման, Կը զմայլին՝ երբ մօտենան մօտերը:

Ատ խայալքն՝ իմ ցընծումներուս պատճառն է, Տէ՛, հասիւր, Մայր սուրբ, դու ձեռքերէս բռնէ, Հետ ծաղկունաց Ղունկիանոսին տար խառնէ, Հոտոտել տուր անմահական հոտերը:

Բ

Բացուեցաւ դըրախտը, տեսայ, ափշեցայ, Հոտաւետ ծաղկունքով բուրաստան անուշ. Առայ հրեշտակաց քաղցը ձէները. Կը չարւի տանադի երգարան անուշ:

Սէյր էր ի զանազան պըտղայի ծառներ, Թեւ թեւի ճիւղերը իրար են բըռներ, Սէրկեիլներ, տանձեր, խաղողներ, նըռներ. Պատուական խիստ համեղ մերգեր կան անուշ:

Երեւցաւ Թագուհի մ' պոյծառ փառքերով, Գըլուխը Թագաղարդ կերպ կերպ դուհարով, Լուսերես սրբուհիք սրբբունաք՝ սիրով Մօտեցան ինձի հետ խօսեցան անուշ:

Գինովցայ սիրալիր սիրոյ խօսքերէն, Շարժեցաւ վառուեցաւ իմ սէրըս նորէն. Գըտաւ Ղունկիանոսը զըւարթ սրբերէն, Իրեն մէկ սիրելի մ' սիրական անուշ:

Գ

Կինէ արքայութեան դռները բացուաւ, Խաս ծաղկունաց քաղցը հոտերը բուրեց, Նըւագարաններուն անուշ ձէները Սատուիկ սիրով զինքըս փաթթեց պաշարեց:

Գեղեցիկ հրեշտակք դաս դաս շարուեցան, Մաքուր կուսանք դէմ յանդիման կայնեցան,

Հըրաշայի սըրբունաք ինձ մօտեցան .
Մէկն եկաւ իրենց մէջ զիս հըրաւիրեց :

Հանդիպայ Յիսուսիս դէմքն ուրախ վախտին ,
Ա՛լ խօսք կա՞յ մի այսպէս երջանիկ բախտին .
Երբ տեսայ փառքերը պայծառ դըլփախտին ,
Սիրտըս փորէս քաշեց ըրնուութեամբ , տիրեց :

Լուսաղաղի թագուհին յանկարծ փայլեցաւ ,
Խակոյն ցընորեցայ խելքս այլայլեցաւ .
Ղուկկիանոսը ապուշ մընաց , մայլեցաւ ,
Աս տեսիլքը վառեց զիս , սիրահարեց :

Դ

Արդ կը փայլին , Մայր սուրբ , սուրբ սըրտիդ վըրայ
Նախ որ խոցեց , եօթը գամերուդ հետ եմ .
Ջարդարուեր ես լուսով պայծառ խասերով ,
Ձի գըտուիր նշան մը , խամբուդ հետ եմ :

Անուշ լեզուիդ՝ զէնտ ու շէքէր մանտըրւած ,
Խօսքերուդ՝ յոյս , մըխիթարանք խառնըւած ,
Եաքուտ , զըմբուտ սանտրերով է սատրըւած ,
Լալ մարգարտով հիւստւած՝ ծամերուդ հետ եմ :

Անմահութիւն , դեղ ու դարման քեզ ըսին .
Յաւալիք մօտենան թող հետըդ խօսին .
Գինովցուց , ափշեցուց Ղուկկիանոսին
Ըզմայլըզական հոտը , համերուդ հետ եմ :

(ԲԱԶՄԱՎԷՊ)

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Թ Ո Ւ Զ Ն

Հիները կ'ըսէին թէ մեծ երջանկութիւն
մ'է կարենալ թուզ ուտել , եւ Ձենոն փի-
լիսովայն միշտ կը գործածէր զայն՝ « ան-
զգայ ընելու համար ինքզինքն այն ամեն
թշուառութեանց , որովք կը տառապի
մարդկութիւնն » : Հանրապետութեան Յոյ-
ներն ա՛յն աստիճան կարեւորութիւն կու-
տային այդ պտուղին որ , բանաստեղծնե-
րու նկարագրութեանց համաձայն , եթէ մէկ
կողմ ոսկի տեսնէին եւ միւս կողմ թուզ ,
ոսկին կը թողուին թուզերուն վրայ նետ-
ուելու համար : Ի Հնում , ըմբշամարտից զըլ-
խաւոր սնունդն էր այն , եւ կը սպասուէր թէ
Աթին կայսրն հինգ հարիւր թուզ կ'ուտէր
իւր ճաշին ատեն : Աստուածաշունչի Թա-
գաւորաց գըրին մէջ կը կարդանք թէ Աբիդ-
եա , կին Նաբաղի , Դաւիթի զայրոյթն հան-

դարտելու համար՝ անոր տարաւ երկու հա-
րիւր հաց , երկու տիկ զլնի , հինգ եփած
ոշխար , հինգ դրիւ բոհրած ցորեն , հա-
րիւր ողկոյզ չամիչ եւ երկու հարիւր շարոց
թուզ : Վերջապէս , կ'ըսուի թէ Պարսից Քը-
սերքսէս թագաւորին ընդդէմ Յունաց պա-
տերազմին պատճառներէն մին էր նաեւ թուզ
արտադրող երկիր մը գրաւելու փափաքն :

Առանց նախնեաց չափ հեռուն տանելու
թուզերուն նուիրուած յարգանքը , կարելի
է ըսել թէ սնունդ մ'է այն որ կը յարմարի
ամե՛ն ժամանակի , ամե՛ն տարիքի եւ ամե՛ն
տեսակ բարեխառնութեանց :

Թուզը միշտ նկատուած է իբր գարման
մը ընդդէմ՝ նիհարութեան , եւ երբեմն կը
կարծուէր թէ կարելի է միայն թուզով բա-
ւականաչափ սնուցանել մարմինը : Կատոն
կը սլատմէ թէ թուզի եղանակին մէջ կը
նուազեցնէր իւր զերեաց հացին քանակու-
թիւնը : Իւր կողմէ , Լիննէ որոշապէս ըս-
տուզած է թէ թուզի այգիներն հսկելու
պաշտօն ունեցող պահապանը գէշ , աւոյգ
եւ յազմանդամ կը լինէին թուզ ուտելով :

Թուզին քիմիական բաղադրութիւնը
մինչեւ մէկ աստիճան կը բացատրէ այս
յատկութիւնը : Արդարեւ , հարիւր մաս
տարբաղադրելով , կը գտնենք՝ չոր թուզի
համար՝ 0,92 բորակածին , 54 բնածուխ ,
25 ջուր , սլարարտ նիւթոց հետքեր , եւ 40
զանազան նիւթեր . —[Թարմ թուզ՝ 0,41
բորակածին , 16 բնածուխ , 66 ջուր , 25
զանազան նիւթեր :

Հին աշխարհին բոլոր երկիրներն , ուր
արեւմտին կիզող տաքութիւն ունի , ինքնա-
բերաբար թղենիներ կ'արտադրեն : Միջերկ-
րականի աւազանն մասնաւորապէս նպաս-
տաւոր է , եւ թուզի հունձքն ի հարաւա-
րին Ֆրանսա , յիտալիա , ի Յունաստան , ի
Փոքր-Ասիա եւ յԱ՛ճէրիա , կարեւորութեան
տեսակէտով կը հաւասարի ձիթապտղի եւ
խաղողի հունձքին :

Սլիտակ լաւադոյն թուզերուն մէջ նը-
շանաւոր են Սիւֆֆրէնի թուզն , Աթէնքի
թուզն , եւ ուրիշ զանազան տեսակներ .
գունաւորներուն մէջ՝ Երուսաղէմիւնը : Շատ
մը թղենիներ տարին երկու անգամ պտուղ
կուտան : Նրկորդ հունքն , որ աշնան մէջ
կը լինի , կարեւորագոյնն է :

Թուզերու եղանակին , կ'ըսուի թէ Բոռ-

վանսի (Ֆրանսա) մէջ բնաւ աղքատ չղլտ-
նուիր :

Նախկին Իտալիոյ համբաւաւոր Սալէր-
նոյի դպրոցն հետեւեալ կերպիւ ամփոփած
է թուղին գլխաւոր յատկութիւնները .

Թուղը կը մեղմացնէ թոքին մաղձային ցաւերը ,
կը հանդարտէ , կը կակղացնէ բորբոքեալ աղիքը :
Թէ՛ ուտեն զայն եփած , թէ՛ կինն զայն հում հում ,
կը գիրցնէ և կը սնուցանէ մօ մնայն բոլոր մանրը ,
կը հալեցնէ և կը լուծէ զանազան ուռեցները ,
եւ իւր հիւթն երբ դրուի թանձր վերքերու վրայ ,
կը փարատէ խոյն և անբուժելի դեղձերն :
Խաշխաշ հիւթին միանալով , դուրս կը բերէ կը հանէ
Մորթին մէջ մնացած կոտրած ոսկրի կտորները :
Կ'արտադրէ ոջիւններու խումբ մը զաղրաթորմի :
Յոգողոգ , կը բոցավառէ սեղ մը զոր կը գրգռէ ,
կամ առաջքը կ'առնու սիրոյ բուռն եռանդին :

Անհնար է ժխտել թուղին կակղիչ , մեղ-
միչ ազդեցութիւնը : Զուրի մէջ լուծեալ
թուղի հեղուկն կը յարմարի բորբոքեալ հիւ-
ւանդութեանց , թոքառաւի , կողացաւի ,
ցնցղատապական հարբուխի , ծաղիկի , խոյ-
լի : Ամեն ոք կը ճանչէ այն կախարհն որ կը
լինի թուղով ու կաթով եւ որ կը գործած-
ուի բերնի բորբոքմանց համար :

Հակառակ Սալէրնոյի դպրոցին հեղինա-
կութեան , շատ չենք հաւատար թուղին այն
յատկութեան թէ ուռեցները կը հալեցնէ
եւ ըստ հաճոյս կը վառէ կամ կը մարէ Աստ-
ղիկին բորբոքումները : Նոյնպէս սխալ է
այն կարծիքը թէ տենդ յառաջ կը բերէ :
Ճախճախուտ երկիրներու մէջ թուղն սեխի
քով կը դրուի իբր տենդ արեւ պտուղ : Այլ
Տր . Պրէմոնի հետ կ'ըսենք թէ ճախճախուտ
երկիրներու մէջ , միայն մէկ բան կայ որ
տենդ յառաջ կը բերէ , այն ալ ճահիճն է :

Բռնուանսի մէջ առած մը կայ որ կ'ըսէ .

Զատկին , թուղն ու քարոզ
Զեն յարմարի ժամանակին :

Այսինքն թէ , երկրին մէջ ա'լ թուղ չեն
ուտեր մեծ պահոց վերջն , որովհետեւ Բը-
ռուանսիին կատարելապէս գլխի թէ այդ
միջոցին թուղը կը խմորի աւելի բար-
ճըր բարեխառնութեան մը ազդեցութեան
ներքեւ եւ թէ իւր համը բոլորովին կը
փոխուի : Այն ստեն պէտք է նոյն տար-
ւոյ թարմ թուղ միայն ուտել : Տարիներով
մնացած չոր թուղերուն համար է որ հին
բժիշկը ոմանք ամբաստանած են այդ հեշ-
տահամ պտուղն թէ ոջիլ յառաջ կը բերէ :

Պէտք է յաւելուլ նաեւ թէ թղենիին կը-
ծու եւ կաթոտ հիւթը կը գործածուի ու-
տից կոշտերն անհետացնելու համար : Սի-
տէնհամ ասկէ երկու հարիւր տարի առաջ
կ'ըսէր . « Նթէ մէկն իւր բոլոր կեանքը
նուիրէր դեղ մը գտնելու ոտից կոշտերու
բուժման համար , արժանի՛ պիտի լինէր ա-
պաղայ սերնդոց շնորհակալութեան եւ մեծ
ծառայութիւն մատուցած՝ մարդկային սե-
ռին » : Պէտք է խոստովանիլ թէ՛ այն որ
խելք ըրած է թղենիին հիւթը գործածել
ոտից կոշտերու բուժման համար , « արժա-
նացած չէ ապաղայ սերնդոց շնորհակա-
լութեան » , եւ՝ մինչեւ ցնոր տնօրինու-
թիւն՝ այդ մասին լաւագոյն դարմանն է...
կերպով մը կտրել հանել կոշտերը : Եւ յե-
տոյ , մոռնալու չէ թէ երբ խնդիրը կոշտե-
րու վրայ է , կօշկակարին պէտք է դիմել
եւ թէ կոշտերը միայն ա'յն մարդոց հիւան-
դութիւնն են որք կօշիկ կը հագնին :

Վերջապէս , աւարտելով , կ'ըսենք , հա-
կառակ ամեն քննադատութեանց զորս կու-
տակած են ընդդէմ թուղին , թէ՛ կերէ՛ք
այդ ընտիր պտուղն երբ լաւ մը հասուն-
ցած է , եւ հետեւեցէ՛ք Պլատոնի օրինա-
կին զոր « թուղ ուտող » մականունած է-
լին , ինչպէս եւ « երկնային » կոչած էին :

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՔԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

2-8 ՄԱՐՏ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Անգլիոյ Երեսօրտաւանական ժողովոյն մէջ
Պ. Կլատսթոն՝ հարցման մը պատասխանե-
լով՝ ըսաւ թէ Ռուսիոյ եւ Անգլիոյ միջեւ
համաձայնութիւն մը դոյացած է , որուն
համեմատ ուստական եւ աֆղան զօրքերն
իրենց այժմեան գրաւած դիրքերէն անդին
չպիտի անցնին :

Անգլիական լրագիրք գոհունակութիւն
կը յայտնեն Սֆղանստանի մէջ զինուորա-
կան նախկին վիճակին պահպանման վերա-
բերեալ անկող-ուռս պայմանադրութեան
համար :

Շարժումս մէջ առնուած այս հեռագրական տեղեկութիւններէն կ'երեւի թէ Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ համաձայնութիւն գոյացած է Աֆղանստանայ սահմանադրւոյ վրայ, այնպէս որ ռուս եւ աֆղան զօրքերը պահելով հանդերձ իրենց այժմու գիրքերն, յառաջ չպիտի խաղան բնաւ: Կերեւի թէ դիւանագիտութիւնը մեծ ճիգ մ'ընել պարտաւորուած է այս արդիւնքը ձեռք բերելու համար, զի դեռ անցեալ շարժում Թայմը պատերազմական սպառնալից լեզու մը կը դորձածէր, ծանուցանելով թէ Էմիրն իւր երկրին պաշտպանութեան համար Անգլիացոց օգնականութիւնն հայցած է: Տէյլընիւզ ալ կ'ըսէր թէ Ռուսը Կաւկասիայէն մեծաքանակ զօրք կը դրկեն ի Կեդրոնական Ասիա: Բարեբաղդաբար, այս զօրքեր, գէթ ժամանակի մը համար, չպիտի դորձածուին կռուելու աֆղան եւ անկլո-հնդկ զօրաց դէմ:

— Կ. Պոլիս հասած արժանահաւատ լուրերէ կիմանանք թէ՝ Ռուսիոյ ներքին գործոց նախարար Թուրքոյ կոմսը վերջապէս պիտի հրաժարի, ոչ միայն զի հիւանդ է, այլ նաեւ զի կայսրը բոլորովին գոհ չէ նորա ծայրայեղ յետադէմ ուղղութենէն: Այս հրաժարում, եթէ նշանակէ միանգամայն ներքին քաղաքականութեան փոփոխում, ինչպէս կը կարծուի, մեծապէս գոհ պիտի ընէ Ռուսիոյ ճշմարիտ բարեկամներն, մանաւանդ հպատակ ազգութիւնները:

— Ամերիկայէն եկած հեռագրեր կը ծանուցանեն պետական հարուած մ'որ Կեդրոնական Ամերիկայի մէջ եղած է՝ այն կողմի հինգ Հանրապետութիւններն ի մի ձուլելու համար: Այս պետական հարուածն ի գործ դրաւ Կոալիցիոնայի Հանրապետութեան նախագահ Պաուիս զօրավարն, որ հնդից Հանրապետութեանց միացումն հռչակեց պարզ հրամանագրով մը, բանակին գերագոյն հրամանատարութիւնն ըստանձնելով: Բայց միւս չորս Հանրապետութիւնք կը պատրաստուին ընդդիմանալ այս քաղաքական «բռնի ամուսնութեան» ձեռնարկին:

— Կը հաւաստեն թէ, կ'ըսէ Հաւանի հեռագիր մը, Եգիպտոսի ելեւմտից խնդրոյն վրայ գոյացեալ համաձայնութիւնն հաստատող դաշնագրին տէրութեանց կողմէ

մէ ստորագրութիւնը պիտի լինի յառաջիկայ երկուշաբթի օր:

— Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ համաձայնութիւնը վերահաստատուած կ'երեւի:

— Կալէսի իշխանը մարտ 24 ին Պէրլին կ'երթայ՝ Վիլհելմ Կայսեր ծննդեան 88 տարեդարձի հանդէսներուն ներկայ գլուխութեամբ:

— Աւստրիոյ գահաժառանգ Ռոտովֆ իշխանն եւ Սթէֆանի իշխանուհին մարտ 25 ին Աթէնք գնացին: Թադաւորը, գահաժառանգ իշխանն եւ նախարարը չողենաւ գնացին՝ ի Պրիւսիոն, արքայազուն հիւրերը դիմաւորելու համար: Աթէնքի կայսրանին մէջ կ'սպասէր թագուհին: Յոգնասուռն ամբոխն յարգանքով կ'ողջունէր իշխանն եւ իշխանուհին: Ն. Բարձրութիւնք արքայական պալատն իջան: Յաջորդ օրն ընդունեցին դեսպանական մարմինն աւստրիական դեսպանատան մէջ: Միջօրէին թանգարաններն այցելեցին եւ երեկոյն 140 սպասով կոչուեց մը տրուեցաւ պալատան մէջ: Արքայազուն ուղեւորը Աթէնքէն մեկնեցան մարտ 26 ին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Կըսուի թէ Անգլիական կառավարութիւնը Բ. Դրան դիմած է, իմանալու համար թէ՝ Վեհ. Սուլթանին կառավարութիւնը կը բարեհաճ՞ արտօնել անգլիական մարտանաւերը Դարդանէլէն եւ Վոսիփոնէն անցնելու, երբ պատերազմ ծագի Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ, յորժամ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնը պիտի պարտաւորի զինուորական գործողութեանց ձեռնարկել Սեւ-ծովու ռուսական եզերաց վրայ: Լոնտոնի կառավարութիւնը պատասխան մը կը խնդրէ այս հարցման, որ ստիպողական է իրեն համար:

— Ֆրանսական Հանրապետութիւնն Ա. կադէմական Պաշտօնակալի պատուակալ տիտղոսն ընծայեց Նէոլոլոս լրագրոյ խմբագրապետ Պ. Վոլթիրասի:

— Ի Փարիզ գումարեալ Միջազգային Յանձնաժողովը համար՝ որ պաշտօն ունի Սիւէզի ջրանցին ազատ նաւարկութեան

կանոնադիր մը պատրաստել, Կայսերական կառավարութեան կողմէ պատուիրակ կարգըւած են՝ Փարիզի Օսմանեան դեսպան Էսատ փաշա, դեսպանատան առաջին քարտուղար Միսաք էֆէնտի, եւ օսմանեան սպայակոյտի գորավարներէն Համի փաշա որ մայրաքաղաքէս մեկնեցաւ նախընթաց օր :

— Պանք տը Գոնսթանթինոքլ եւ Եպիրոս-Թեսալիա դրամատանց ի մի ձուլման խորհուրդն ի բաց թողուած է անորոշ ժամանակի մը համար, հետեւեալքար Կ. Պոլսոյ Պանք տը Գոնսթանթինոքլ դրամատունն իւր գործառնութիւնները պիտի շարունակէ ըստ առաջնոյն :

— Կը լսենք թէ կը խորհուրի օսմանեան պատուիրակութիւն մը զրկել ի Պէլլին, Պիդմարը իշխանին 70Ը տարեդարձին առթիւ :

— Բ. Դուռն համակերպելով աւստրիական կառավարութեան փափաքանաց, հաւանութիւն տուած է որ ի Թուրքիա ներմուծեալ աւստրիական ապրանքներէն ըստ արժէքին 10 8 մաքսատուրը առնուի :

— Ալպանիայէն առնուած վերջին լրաց նայելով, Վէյսէլ փաշա Բրիգրէնտ մտեր է տասներկու վաշտ հետեւեալազօրաց գլուխն անցած : Խաղաղութիւնը կը վերսկսի այդ քաղաքին եւ շրջակայից մէջ, եւ կը կարծուի թէ զրկուած այս զօրութեանց չնորհիւ, վերջերս պատահած շփոթութիւնը բոլորովին պիտի անհետանան :

— Ֆրաթ լրագիրը կը ծանուցանէ թէ Մարաշէն չորս ժամու չափ հեռաւորութիւն ունեցող Աֆրին գետն ամեն ձմեռ յորդեալով ճանքաները գոցելուն համար, Մարաշցի Մկրտիչ աղա անուն երեւելի Հայ մը՝ Օրդան գիւղի ուրիշ անձի մը հետ՝ իրենց քսակէն 200 օսմ ոսկի ծախսելով, այդ գետին վրայ քարաշէն հոյակապ կամուրջ մը կառուցեր են երեք կամարներով :

— Անցեալներն Աւստրիոյ Երեսփոխանական Ժողովոյն մէջ երեսփոխան մը Թուրքիոյ դէմ խօսած լինելով, Վիեննայի Օսմ. դեսպան Սաաթուլլահ փաշայի կողմէն եղած ազդարարութեան վրայ, յիշեալ կառավարութեան պաշտօնական թերթն յետոս կոչում ըրեր է :

— Պրուսայի գաւառին մէջ մանր դրամոց չգոյութեան պատճառաւ առեւտուրը խիստ դժուարացած լինելով, կուսակալին

խնդրանօք երմտական նախարարութիւնն 100,000 դրուշի մանր դրամ զրկած է յիշեալ գաւառն :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Յաւալի լուր մը հասաւ մեզ շաբթուս Կովկասէն : Փետր. 23 ին փակուած են Ռուս-Հայոց բոլոր ուսումնարաններն Պետական հրամանաւ եւ Կաւկասիոյ ընդհանուր կառավարիչ Տոնտուքոֆ Գորսաքով իշխանին եւ Կաւկասիոյ վարժարանաց՝ պետական ընդհանուր տեսուչ Պ. Յանովսքիի կարգադրութեամբ : Այս ուսումնարաններ կը կառավարուէին եկեղեցեաց եւ թեմերու եկամուտներով : Այսպիսի անօրինութեան մը զիմելու պատճառն այն է որ Էջմիածնի Սինոդը կը մերժէր 1884 տարուոյ Փետրուար 16 ի օրէնքն :

Այս միջոցը ձեռք առնուած է հակառակ Ս. Սինոդի խնդրանաց որ կ'ուզէր յետաձգել խնդիրը, մինչեւ ցընտրութիւն նոր Կաթողիկոսին :

— Ազգային վարչութեան Խառն Ժողովն այս երկուշաբթի օր յարտասովոր նիստ գումարուելով, Երեսփոխանական Ժողովոյ Ատենապետ Վսեմ. Եռեսուֆեան Տիգրան էֆէնտիի հետ խորհրդակցութեամբ, պատրաստեց հետեւեալ շրջաբերականն, ըստ որոշման Ազգային Ժողովոյ վերջին նստին : Այս շրջաբերական հաղորդուեցաւ անմիջապէս գաւառական բոլոր Առաջնորդաց .

Կ. Պոլիս, 4 մարտ 1885

«Ազգային Երեսփոխանական Ժողովն իւր վերջին նստին մէջ՝ որ տեղի ունեցաւ ամսոյս 1 ին, ուշադրութեան առնելով Ս. Էջմիածնայ Ընդհանրական Հայրապետին ընտրութեան խնդիրն՝ որոշեց .

Ս. Այս անգամ եւս մասնակցիլ ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, համաձայն 1884 ի եղանակին :

Բ. Համագումար Ժողովոյ եւ Ազգային Ժողովոյ անցեալ տարուան կատարած Կաթողիկոսական ընտրութիւններն նոյնութեամբ ընդունիլ, Համագումար Ժողովոյ եօթն ընտրելեաց ցանկը լրացնելով վիճակաւ դուրս մնացեալ Եպիսկոպոսին անուամբ

և Ազգային Ժողովոյ եռանուն ցանկը՝ որ պակսած է հոգեւոյ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքի վախճանելովն, լրացնել նոյն եռանուն ցանկէն դուրս առաւելագոյն քուէ ստացող Եպիսկոպոսին անուամբ :

Գ. Յանձնարարել Ազգային Վարչութեան որ անյապաղ գործադրէ Ազգային Ժողովոյ նախորդ որոշումն, որ է Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան համար օրինական հրահանգն տալ անմիջապէս դաւաճական Առաջնորդաց, այսինքն հեռագրել թէ Գաւառական Վարչութիւնը և Առաջնորդք ուրիշ կերպիւ չեն կրնար պատասխանել իրենց եղած սինօդական հրաւերին, այլ միայն յայտարարելով թէ՝ «Ըստ տրամադրութեան 61-րդ յօդուածոյ Ազգային Սահմանադրութեան՝ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու իրաւունքն Կ. Պօլսոյ Ազգային Ժողովոյն սեփականեալ «ըլլալով՝ նա է միայն իրենց օրինաւոր ներկայացուցիչն» : Հետեւաբար տարբեր կերպիւ վարուող Առաջնորդք և Վարչութիւնը պատասխանատու կը մնան առաջի օրինաց և Ազգին :

Արդ՝ ըստ տնօրէնութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան խառն Ժողովոյ, հաղորդելով Ձեզ Ազգային Ժողովոյ սոյն երբեակ որոշումներն, կը հրաւիրեմք Ձեզ ի դործ դնել անթերի ինչ որ նոյն որոշմանց երրորդն պարտաւորութիւն կը դնէ Ձեր վրայ, եւ տեղի չտալ Ձեր կողմանէ ապագայ որ և է պատասխանատուութեան :

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՆՆԵՐ

— Մեկնէ՞՞ք որ Ռօժ Վատիկանի թերթին «արեւելեան գործոց քաջահմուտ քաղաքագէտէ» մը առնելով, կը հրատարակէ յօդուած մը, որ տեղեկութիւններ եւ խորհրդածութիւններ կը պարունակէ «Արեւելից մէջ Կաթողիկոսական ծաւալման» վրայ :

Յօդուածագիրը կ'ըսէ. «Հայաստանէն առնուած լուրերն յոյժ մխիթարական են : Կաթողիկոսութիւնն անդ կը յառաջդիմէ զարմանալի արագութեամբ մը : Մեծ, ինչպէս նաեւ Փոքր Հայաստանի մէջ, Կաթողիկ Միսիոնարներուն դործն արդիւնաւոր կը հանդիսանայ : Ամբողջ յիշեր Կաթողիկ վարդապետներ կը խնդրեն եւ կը մոնեն ի ծոց Կաթողիկոսութեան : Գլխաւոր քաղաքացի մէջ, ընտանիքներ խումբ խումբ կը թողուն հեր-

ձուածն, եւ կը միանան Հռոմայ Եկեղեցւոյն հետ » :

Յօդուածագիրը կրօնային ծաւալման այս յառաջդիմութեան երկու պատճառ ցոյց կուտայ : Մին սա է թէ Լէոն ԺԳ. Պապն հասկցած է թէ Լատին Միսիոնարներ դործածելով յաջողիլ կարելի չէր : Հայք, Յոյնք, Պուլղարք կը միափաքիո կաթողիկ լինել, բայց ոչ լատին : Ուստի Պապն հրահանգներ տրւած է որպէս զի կաթողիկոսութիւնը տեղային ծէսերու աւելի համաձայն եղանակաւ ի դործ դրուի, բնիկ Կաթողիկ Միսիոնարներու ձեռամբ . Պապն այս մտօք քաջալերեց արեւելեան Կաթողիկ հասարակութիւնները :

Յօդուածագիրը կաթողիկոսութեան ծաւալման երկրորդ պատճառ կը համարի բնիկ (հայ, յոյն եւ) կղերին տկարութիւնը, կազմալուծութիւնն եւ կարգապահութեան ոգւոյն արեւելեան եկեղեցեաց մէջ զգալապէս տկարանալն : Անշուշտ, կ'ըսէ, դեռ հեռի ենք այն ժամանակէ, ուր՝ Հռոմ, Կ. Պոլիս, Էջմիածին եւ Դամասկոս կաթողիկոսութեան սրբազան կապով միացեալ պիտի լինին. բայց դէպքերը կը քալեն շարունակ. ամէն օր քար մը կ'իյնայ արեւելեան հին Եկեղեցեաց քայքայեալ շէնքէն » :

Ի վերջոյ յօդուածագիրը կը յայանէ թէ անկրօնութիւնն եւ ծայրայեղ բողոքականութիւնն զգալի յառաջդիմութիւններ կ'ընեն արեւելեան ժողովրդոց մէջ, զորս Կաթողիկ եկեղեցին միայն իւր հարազատութեամբ, իւր կղերին սրբութեամբ եւ իւր եպիսկոպոսաց հմտութեամբ կարող է վերկել այդ մեծ վտանգէն :

— Նրուսաղիմայ Միաբաններէն Արթ. Տ. Թովմա վարդապետ որ 4-5 տարիէ ի վեր Եալովայի ագարակի տեսչութիւնը կը վարէր, ժանտատենդէ բռնուելով վախճանեցաւ անցեալ ուրբաթ օր : Նրուսաղիմայ Պատրիարքի փոխանորդ Գեր. Սիմէոն Սրբազան յիշեալ վարդապետին հիւանդութիւնը լսելով՝ բժշկի մը ընկերակցութեամբ փութացած էր Եալովա երթալ, բայց դժբաղդաբար հիւանդն այլ եւս չէր ապրեր :

Տ. Թովմա վարդապետ աշխատասէր եւ անձնուէր անդամ մ'էր Ս. Յակոբայ միաբանութեան, ուստի եւ նորա մահը մեծ ցաւ կը պատճառէ : Օծման եւ թաղման հանդէսներն արժանաւայել կերպիւ կատարուած են :

Գեր. Սէֆէրեան Սրբազան վերադարձաւ նախընթաց օրը :

— Ի Մատրիտ հրատարակեալ Մաթէմատիկական ֆրանսերէն ամսագրերէն ամսագրերէն անցեալ տարի այս միջոցներս քանի մ'ընդարձակ յօդուածներ հրատարակեց «Կասթոն տը Ֆրէզն» ծածկանուամբ, որ Կաթողիկոսական ընտրութեան առթիւ պատմական ծանօթութիւններ կը պարունակէր ընդհանրապէս Հայոց Ազգին, եւ մասնաւորապէս Էջմիածնայ Կաթողիկոսութեան եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան վրայ, եւ այս երկու Աթոռոց վիճակն, յարաբերութիւններն, Պալատէնիան եւ անոր դէմ յարուցուած ընդդիմութիւններն եւ այլն կը ծանօթացնէր Եւրոպոյ :

Այս կարեւոր ամսագրերէն, որոյ կ'աշխատակցին Եւրոպոյ նշանաւոր գրագէտներէն շատերն, այս անգամ վերստին սկըսած է հրատարակել իւր միեւնոյն աշխատակցին կողմէ զրկուած ընդարձակ յօդուած մը «Ընտրութիւն Էջմիածնայ Կաթողիկոսին» խորագրով, յորում կը շարունակէ նախապէս սկսուած տեղեկութիւններն : Յօդուածագիրն այս անգամ կը խօսի 1834ի Կաթողիկոսական ընտրութեան գործողութեանց վրայ :

— Կը լսենք թէ Մեծ. Տոբթոր Ի. Թամամէֆ կը պատրաստուի Եւրոպա ուղեւորիլ Զատիկէն յետոյ, եւ հրապարակաբար թիւներ ընել Պէրլինի եւ Փարիզի մէջ, նիւթ ընտրելով «Բժշկականութիւնն արեւելքի մէջ եւ առհասարակ արեւելքի վերաբերեալ խնդիրներն» :

Մեծարոյ բժիշկն ասկից իբր երկու տարի առաջ եւս հրապարակաբար թիւն մ'ըրաւ ի վիճնա «Արեւելքի բժշկականութեան» վրայ, որոյ մասին եւրոպական լրագիրք տեղեկութիւններ հրատարակեցին ժամանակին :

Կը լսենք նմանապէս թէ Տոբթոր Թամամէֆ մտադիր է, հաւանականաբար ի Լայպցիկ, հրատարակութեան յանձնել իւր ընդարձակ եւ կարեւոր երկասիրութիւնն՝ «Անցեալն, ներկայն եւ ապագայն Կ. Պոլսոյ» անուամբ, զոր գրած է Անդլիարէն եւ Ռուսերէն լեզուներով :

— Պատրիարքական Տեղապահ Հայրը նըկատողութեան առնելով Նիկոմիդիոյ Ղընճը-

լար գիւղի ազգայնոց կարեկցական վիճակն, որոյ վրայ Պատրիարքարանի ուշադրութիւնն հրաւիրած էր Արեւելք, Նիկոմիդիոյ առաջնորդարանէն հեռագրաւ տեղեկութիւն պահանջեց եւ միանգամայն հրաման ըրաւ Ղընճլարցի Տ. Թադէոս քահանային որ աստ կը պանդխտի, որպէս զի իւր գիւղը վերադառնայ, հովուէ ժողովուրդն եւ հարկ եղածը տեղեկագրէ կեդրոնին :

— Ազգային Ժողովը գումարեցաւ երէկ ի Ղալաթիա ընդ անենապետութեամբ Վըսեմ. Տիգրան էֆէնտի Նուսուֆեանի, եւ զբաղելով յառաջիկայ Կաթողիկոսական ընտրութեան համար Թուրքիոյ Հայոց կողմէ զրկուելիք պատուիրակութեան խնդրովն, հետեւեալ բանաձեւը քուէարկեց՝ յետ երեք ժամու խորհրդակցութեան .

(Բանայե-)

«Ազգային Ժողովն իւր Ատենապետաց Դիւանին կը յանձնարարէ լիազօր իրաւասութեամբ՝

Ա. Պատուիրակութեան եղանակը սահմանել .

Բ. Ի հարկին Կ. Պոլսէն պատուիրակ ընտրել .

Գ. Պատուիրակաց հրահանգը պատրաստել » :

— Պատր. Գեր. Փոխանորդ Հայրն հետեւեալ կարեւոր շրջաբերականն ուղղեց դաւառական Առաջնորդաց եւ մայրաքաղաքի Եկեղեցեաց Բարոզիներուն .

Կ. Պոլիս 28 փետր. 1885

Ազգային կեդրոնական վարչութեան Կրօնական Ժողովն տեղեկանալով թէ յայլ եւ այլ տեղիս, մանաւանդ ի գաւառս, սրբազան անօթը եւ ազգային զանազան հընութիւնք ի վաճառ կը հանուին առանց զիտութեան Պատրիարքարանիս, յանձնարարեց ինձ որ յատուկ շրջաբերականաւ ծանուցանեմ Ձերդ Գերապատուութեան թէ այսուհետեւ չթոյլատրէք բնաւ երբեք որ գաղտնի կամ յայտնի կերպով ի վաճառ հանուին թէ՛ եկեղեցական անօթը եւ սպասք, զոր օրինակ, Խաչ, Պատկեր, Սկիւհ, ձեռագիր Աւետարան եւ այլ մատեանք, եւ թէ՛ ու է հնութիւնք :

Զայս որոշումը կրօնական ժողովոյ Ազգ. կեդրոնական վարչութեան հաղորդելով Ձերումը Գերապատուութեան, կը յանձնաւորեմ Ձեզ, որ ամենայն աջակցութեամբ հսկէք այս մասին, և անհատապէս ի գործ դնէք զարժանն այնպիսեաց համար, որք շահադիտաբար կը ժողովին չյարգել զտոյն պատուէր պաշտօնական: Իսկ եթէ սոյն շրջաբերականն նախանձախնդրութեան ոգւով չգործադրուի Ձեր կողմանէ, Պատրիարքարանս սլատաթխանատու պիտի ճանչէ զԳերապատուութիւն Ձեր իբրեւ զանցառու և անտարբեր ոք:

Կրօնական ժողովն լսելով նաեւ որ ի տեղիս տեղիս հոգեհանգստեան սլաշտօն կը կատարուի տարբեր եղանակաւ, և ոչ միօրինակ, ինչպէս քանիցս հրամայուած է Պատրիարքական կոնդակօք, և շատ անգամ անդր քան զչափն բոլորովին անպաշտօնաւորականաւ, ինչպէս մի քանի տեղեր տեղի ունեցան Հոգեւոյ Տէր Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր հանդիսաւոր հոգեհանգստեան առթիւ, որոնց այսու շրջաբերականաւ ծանուցանել Ձերումը Գերապատուութեան թէ յետ այսօրիկ հոգեհանգստեան պաշտօնն պարտիք կատարել յետ աւարտման Սրբոյ Պատարագի, ըստ հնաւանդ սովորութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՆ

— Ինչպէս վերեւ ծանուցած ենք, Պատր. Տեղապահն Նիկոմիդիոյ առաջնորդարանէն հեռագրաւ տեղեկութիւն պահանջած էր ի մասին Ղնճըլար գիւղի ազգային տխրալի վիճակին, զոր Արեւել հրատարակած էր: Երէկ Նիկոմիդիոյ Փոխ-Առաջնորդին պատասխանագիրն հասաւ, որ կը ծանուցանէր թէ թէեւ եկեղեցին և դըպրոցն բաց են, այլ սակայն ժողովուրդն յետնեալ (պահ) տրոց նորոգ բաշխման վրայ յերկուս պառակտուեր և շատ անկարգութիւնք տեղի ունեցեր են և թէ 15—20 տուն ազգայինք ևս դիմեր են ի բողոքականութիւն:

Պատր. Տեղապահն այս գիրն Կրօն.

ժողովոյ պիտի յանձնէ ի նկատառումն և յընդ փոյթ տնօրինութիւն:

— Կը լսենք թէ Թիւրապեան անուն Հայազգին, որ բաւական տարիներէ հետէ Բարեյուսոյ Դըւիսը կը գտնուէր ադամանդի հանք մը բանեցնելով, վերջերս բախտ ունեցեր է 300—350 քրադնոց ընտիր ադամանդ մը գտնելու, որոյ արժէքը 80էն 100,000 ոսկի կը համարուի եղեր: Գոհութեամբ կ'արձանագրենք գործունեայ Հայազգւոյ մը այս եղական յաջողութիւնը:

— Տ. Արսէն վ. Թօխմախեան նախընթաց օր մայրաքաղաքս հասաւ:

— Յաւօք կ'իմանանք թէ վսեմ Օտեան էֆէնտիի բեռորդի Օննիկ էֆ. Երկանեան, որ հանրածանօթ է իւր հնարած Բեքէլ գործիքով, շաբաթ օրը վախճաներ է Ազգային Հիւանդանոցին մէջ:

ՎԵՐՁԻՆ ՀՅՈՍԴՐԱԼՈՒԻՐ

ԱՅՍԵՆ ՆԱՎԱՍ

Լոնտրա, 18 մարտ

Երեսփոխանական ժողովոյ մէջ, Պ. Կառլոթին, հարցման մը պատասխանելով, կ'ըսէ թէ եգիպտական ելեւմտից վերակազմութեան պայմանագիրն այսօր պիտի ստորագրուի երաշխաւոր մեծ տէրութիւններէն:

Լոնտրա 19 մարտ

Սլանդորդ կը հաւաստէ թէ ընդդիմադիր կուսակցութիւնը պիտի առաջարկէ Խորհրդարանին մերժել եգիպտական ելեւմտից վերակազմութեան պայմանագիրն: Ընդդիմադիր կուսակցութիւնը կը յուսայ թէ արմատականք կամ ծայրայեղ ազատականք համաձայն պիտի գտնուին այս առաջարկին:

Պուրբէշ, 18 մարտ

Երեսփոխանական ժողովն մերժեց առաջարկ մը, որ կը խնդրէր վերստին ազատ նաւահանգիստ ընել Խալսայիլ և Կալաց:

ԱՐԲԱ ՔՕՆԱԹԱՆԹԵՆ

ՍԻՐԱՎԷՊ Լ. ՀԱՆԷՎԻԻ

ԹԱՐԳՄԱՆԵՅ

ՕՐԻՈՐԻ Ե. ՕՏԵԱՆ

Պաղտատլեան (Արամեան) տպարանէն յատուկ խնամով իւրոյ ընծայուած այս սիրովէսը ֆրանսական ժամանակակից գրականութեան չքնաղագոյն արտագրութիւններէն մին է : Այս գործը մեծ ախորժով պիտի կարգան ամեն անոնք որք վիպական գրութեանը մէջ արուեստակեալ զգացումներէ աւելի բնականութիւն կը փնտռեն և անպարկեշտ նկարագրութիւններէ աւելի բարոյականութիւն : Ուստի նա արժանի է իւր տեղն ունենալ ամեն բնասանիքի մատենադարանին մէջ, իբր անոր ազնուագոյն զարդերէն մին : Թարգմանութիւնն յաջողած է հաւասարիլ բնագրին գեղեցկութեանն, և բանասիրաց մասնաւոր ուշադրութեանը պիտի արժանանայ իւր հարազատութեամբ և բառերու և ոճերու խղճամիտ ընտրութեամբ : Ազնիւ թարգմանչուհւոյն եղբոր, Վսեմ Օտեան էֆէնտիի ոսկեղինիկ գրչէն ելած ընդարձակ յառաջաբան մը վայելչապէս կ'արտայայտէ դրքին իսկական արժանիքը, և անհամեմատ փայլ մը կուտայ այս հրատարակութեան, որ ձօնուած է իրենց առաքինի հօր, բարեյիշատակ Օտեան Պօղոս Աղայի անունն :

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով, ի գին 10 դրուշ :

Կեդրոնատեղին է Արամեան տպարանը :

Պ. ԼԵՔՏՈՐԻ ՄԵՐՈՒԹԻՆԸ

ՅՈՐԹԻՆԷ ՏԻԻ ՊՈՒՍԿՈՊԷ

Իւթիւճեան Կարապետ էֆէնտիի թարգմանութեամբ Արեւելքի մէջ իբրեւ թերթօն հրատարակեալ այս հետաքրքրաշարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ամբողջ չորս հատորները կազմուած կը վաճառուին մայրաքաղաքիս ամեն Հայ գրավաճառաց քով, և կամուրջին գլուխը ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներու խանութները : Զորս հատորին գինն է 20 դրուշ :

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ Ս. Իւթիւճեան էֆէնտիի հետեւեալ թարգմանութիւնք .

ԹԱՓ. ՀՐԵԱՅ Բ. տպագրութիւն պատկերազարդ Ա. հատոր .	գին	ըր 50
ՅԵՐԿԻԷ Ի ԼՈՒՍԻՆ	» »	7 1/2
ՄԱՐԲԻԶՈՒՀԻ	» »	7 1/2
ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ 2 հատոր	» »	15
ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐՈՒՄԷ		
2 հատոր	» »	12
ԱՄՈՒՍԵՈՒԹԻՆՔ ՓԱՐԶԻ	» »	6

ԱՆԿՅԻ ԽԱՎԵԱՐԻ ՄԵՆԱՎԱՃԱՌՆ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ս Ա Կ

ՄԵԻ ԶՈՐ ԽԱՎԵԱՐ

Գերազանցապէս յարմար աղծան պատրաստելու եւն. եւն.

Օխան երսուն դրուշ

Օրինակներ կը գտնուին է. Մօրիսի վաճառատունն,

51, Բէրլէնպէ Բաղար, Ղալաթիա

Մեծ զեղչ կը լինի յանձնակատարաց

ՆՈՐ ՓՈԲՐԻԿ ՅԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԻ ԱԺԱՆ ԳՆՈՎ
ՈՍԿԵԱՅ ՇՔԱԴՐԱՄ 1878/ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԳԻՄԻՆ ՄԷՋ

ՅԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԻՆԵՐ

Կաղալին ըմպելիներ պատրաստելու համար

ՍԵԼՈՒ ջուր, Լիմոնատ, Սոտա-Ուոթեր, Մրմուռակ գինի, Գարեջուր
Ներքնակողմեն արծաթաղածեալ



Մեծ և փոքր լծակով խողովակներն հաստատուն են և դիւրաւ մաքրելի

Ժ. ՀԵՐՄԱՆ-ԼԱՇԱԲԷԼ

Ժ. ՊՈՒԼԷ ԵՒ ԸՆԿ. Յաջորդք, Երկրաչափք—Յօրինիչք .

Փողոց ՊՈՒԱՆՕ, 31—33 (Պուլվար Օրնանօ 4-6) ՓԱՐԻՋ

Մանրամասն յայտագիր կը դրկուի ձրիաբար

Խ Ա Ր Ի Ս Խ

ԿԵՆԱՅ, ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ՕԺՏԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Ի Վ Ի Ե Ն Ն Ա

Գործողութիւնը 1884 Դեկտեմբեր ամսուն

Այս ամսուն մէջ ստացուած և ստորագրուած են 879 նոր մուրհակներ (բոլիս) որք
կը կազմեն 5.120.387.50 Փրանգ ապահովագրեալ դրամագլուխ .

Բաժիններու դանձումն 806.315 »

Վճարումն մահուանց առթիւ 110.807 »

Ամփոփումն 1884 տարւոյ գործողութեանց

Ընկերութիւնն ստորագրած է 7.940 մուրհակներ որք ի միասին կը կազմեն .
43.545.782.50 Փրանգ ապահովագրեալ դրամագլուխ .

Բաժնոց դանձումները 8.755.257.50 Փրանգի բարձրացած են

Վճարումները մահուան առթիւ 1.667.077.50 Փրանգ :

Իւր հիմնարկութենէն ի վեր, ընկերութիւնը վճարած է

Մահուանց առթիւ	32.237.662.50 Փր.	} Համագումար 99.808.925 Փրանգ
Օժտմանց առթիւ (1871-1884)	67.511.262.50 »	

Թաւրիչոյ համար ընդհանուր ներկայացուցիչ

ՄՈՐԻՍ ՊԷՐԳՅԻ

Գրասենեակը Ղալաթիա, Վոյվօտա փողոց, Թիւ 26 գերմանական Թըլթաան վրայ :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ